ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2024-2029

ՀՀ Լոռու մարզի Սարահարթի Սուրեն Փիլոսյանի անվան միջնակարգ դպրոց

ՆԱԽԱԲԱՆ

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք: Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է: Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որի հիման վրա պլանավորվում է ուսումնական հաստատության աշխատանքն առաջիկա 5 տարիների համար:

Ուսումնական հաստատության 5-ամյա զարգացման ծրագիրը պետք է ուղղված լինի «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործմանը: Այն է՝ յուրաքանչյուր սովորողի

1) մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացումը,

2) մարդկային արժանապատվության պահպանումը,

3) ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցումը,

4) ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերումը և ինքնուրույն կյանքի նախապատրաստումը,

5) մասնագիտական կողմնորոշումը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստումը,

6) ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովումը,

7) որպես ապագա քաղաքացու ձևավորումը:

Կրթությունն իր բովանդակությամբ ու ձևերով պետք է համապատասխանի քաղաքական, տնտեսական, սոցիալական և էկոլոգիական բազմաթիվ խնդիրների առաջ կանգնած երկրի կայուն զարգացող և բարեկեցիկ հասարակության կայացմանը:

Մարդն իր շրջակա միջավայրի և՛ ստեղծողն է, և՛ կառուցողը, ուստի այս համատեքստում խիստ կարևորվում է սովորողին շրջապատող սոցիալ-մշակութային միջավայրի դաստիարակչական և զարգացնող դերը, ինչպես նաև սովորողի մասնակցությամբ սովորողի ինքնազարգացմանը նպաստող կրթական միջավայրի ստեղծումը:

Սույն զարգացման ծրագիրը կազմելիս առաջնորդվել եմ հանրակրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներով՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ. սեպտեմբերի 22-ի թիվ 35-Ն հրամանով հաստատված ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կազմման ձևաչափը, որի ընթացքում հաշվի են առնվել բոլոր շահառու խմբերի, այդ թվում՝ սովորողների, անձնակազմի, համայնքի, կարիքները:

Զարգացման ծրագրում իրականացվել է «ՀՀ Լոռու մարզի Սարահարթի Սուրեն Փիլոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ նաև՝ դպրոց կամ ուսումնական հաստատություն) ընթացիկ գործունեության վերլուծություն, ներկայացվել են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, բացահայտվել են դպրոցի կրթական կարիքները: Սահմանվել են դպրոցի գործունեության առաջիկա 5 տարիների նպատակները, ձևակերպվել նպատակներից բխող խնդիրները, մշակվել է խնդիրների լուծման ճանապարհային քարտեզը՝ անհրաժեշտ գործողություններ, ռեսուրսներ, ակնկալվող արդյունքներ, արդյունքների գնահատման չափանիշներ, ժամանակացույցեր, պատասխանատուներ: Ուսումնասիրվել են զարգացման ծրագրի իրականացման հնարավոր ռիսկերը, առաջարկվել դրանց նվազեցման կամ չեզոքազման մեխանիզմներ: Ապահովվել է զարգացման ծրագրի իրականացման հաշվետվողականությունը և դրա իրականացման նկատմամբ վերահսկողությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքում (նախկին՝ Քյուլուջա) դպրոց գործել է դեռևս խորհրդային տարիներից: Հայրենական մեծ պատերազմից հետո գյուղում գործել է վեցամյա դպրոց, որը հետագայում դարձել է միջնակարգ: 1963 թվականին դպրոցի համար կառուցվել է տիպային քարակերտ շենք, որտեղ ուսանել են մինչև 700 աշակերտ: 1988 թվականի դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժի արդյունքում դպրոցը քանդվել է, արի արդյունքում բարեբախտաբար զոհեր չեն գրանցվել: 1989 թվականից դպրոցն իր գործունեությունը շարունակել է վագոն-տնակներում: 1992 թվականի կառուցվել և 1993 թվականին շահագործման է հանձնվել դպրոցի նոր շենքը, որտեղ ներկայումս իր գործունեությունն է ծավալում «ՀՀ Լոռու մարզի Սարահարթի Սուրեն Փիլոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը:

2003 թվականի հունվարի 23-ին դպրոցի կազմակերպաիրավական ձևը փոփոխվել է պետական ոչ առևտրային կազմակերպության, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը՝ 90.210.00364, ՀՎՀՀ՝ 06802239:

2021 թվականի փետրվարի 8-ին դպրոցն անվանակոչվել է դպրոցի շրջանավարտ, զոհված զինծառայող Սուրեն Փիլոսյանի անունով:

2023 թվականի սեպտեմբեր ամսից դպրոցն անցում է կատարել կառավարման նոր մոդելին, և վարչատնտեսական մասի կառավարումը փոխանցվել է վարչատնտեսական մասի համակարգողին:

Դպրոցի գործունեության հասցեն է՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Սարահարթ, 6-րդ փողոց, 15 շենք: Դպրոցը մարզային ենթակայության է, լիազոր մարմինը՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ:

Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով և իր հայերեն անվանումով կլոր կնիք:

Դպրոցի աշխատանքային շաբաթվա տևողությունը հնգօրյա է, իսկ աշխատանքային ռեժիմը՝ միահերթ:

Դպրոցի կայքը՝ https://sarahart.schoolsite.am/ , որտեղ հրապարակվում են դպրոցի գործունեությանն առնչվող հաշվետվություններ, ծրագրեր և այլ փաստաթղթեր:

Դպրոցում սովորողների թիվը 2023 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ 119 սովորող:

2011 թվականի հուլիսի 15-ին դպրոցին տրվել է տարրական (լիցենզիայի համար՝ Ա0339, սահմանային տեղ՝ 57), հիմնական (լիցենզիայի համար՝ Ա0334, սահմանային տեղ՝ 120), միջնակարգ (լիցենզիայի համար՝ Ա0275, սահմանային տեղ՝ 125) հանրակրթական ծրագրեր իրականացնելու լիզենցիաներ, իսկ 2018 թվականի նոյեմբերի 26-ին նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնելու լիցենզիա (լիցենզիայի համար՝ Ա0549, սահմանային տեղ՝ 25):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՏԱՐՐԱԿԱՆ հանրակրթական
(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0339

Սույնով վավերացվում է, որ
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
(կազմակերպության շրջանառության կնիքում նշված անվանումը)
ՀՀ Լոռու մարզ, գ. Սարահարթ
(գտնվելու վայրը)
ՀՀ Լոռու մարզ, գ. Սարահարթ
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Տարրական հանրակրթական
(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ Ա. Աշոտյան
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ. «15» հուլիսի 2011 թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՀԻՄՆԱԿԱՆ հանրակրթական
(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0334

Սույնով վավերացվում է, որ
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
(կազմակերպության շրջանառության կնիքում նշված անվանումը)
ՀՀ Լոռու մարզ, գ. Սարահարթ
(գտնվելու վայրը)
ՀՀ Լոռու մարզ, գ. Սարահարթ
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Հիմնական հանրակրթական
(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ Ա. Աշոտյան
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ. «15» հուլիսի 2011 թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՄԻՋՆԱԿԱՐԳ հանրակրթական
(դպրոցի անվանումը)
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0275

Սույնով վավերացվում է, որ
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
(դպրոցի կրթական գործունեության կազմակերպման-իրավական ձևը)
ՀՀ Լոռու մարզ, գ. Սարահարթ
(պաշտոնի փաստը)
ՀՀ Լոռու մարզ, գ. Սարահարթ
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Միջնակարգ հանրակրթական
(դպրոցի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ *Ա. Աշոտյան*
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ. «15» *հուլիսի* 2011 թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա

ԼԻՑԵՆԶԻԱ № 0549

Սույնով վավերացվում է, որ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
(դպրոցի կրթական գործունեության կազմակերպման-իրավական ձևը)
ՀՀ Լոռու մարզ, համայնք Սարահարթ 6 փողոց 15
(պաշտոնի փաստը)
ՀՀ Լոռու մարզ, համայնք Սարահարթ 6 փողոց 15
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Նախադպրոցական կրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ *Ա. Հարությունյան*
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ. «26» *նոյեմբերի* 2018 թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

ԴՊՐՈՑԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1. Դպրոցի շենքային պայմանների վերլուծությունը

«ՀՀ Լոռու մարզի Սարահարթի Սուրեն Փիլոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքը կառուցվել է 1992 թվականին, իսկ շահագործման է հանձվել 1993 թվականին: Շենքը տիպային երկհարկանի կառույց է, բաղկացած աջ և ձախ մասնաշենքերից և նախատեսված է 327 սովորողի միաժամանակյա ուսուցում կազմակերպելու համար: Շենքի ընդհանուր մակերեսը կազմում է 3003,5 քառակուսի մետր, իսկ հողամասի մակերեսը՝ 8330 քառակուսի մետր:

Ստորև ներկայացված է դպրոցի շենքի կառուցվածքը, սենյակների բաշխվածությունը, օգտագործման ենթակա մակերեսները, և վիճակի գնահատականները եռաստիճան համակարգով՝ հիմնանորոգված է, բավարար է կամ ունի վերանորոգման կարիք (վիճակի գնահատումն իրականացվել է վարչատնտեսական մասի համակարգողի հետ համատեղ ուսումնասիրության արդյունքում):

<u>1-ին հարկ</u>

Նախասրահ – 80մ^2 , ունի ջեռուցման համակարգի անցկացման, պատուհանների և դռների փոխարինման կարիք:

Աջ մասնաշենք

1. Շախմատի դասասենյակ – 28մ^2, բավարար

2. Տեխնիկական սպասարկման սենյակ – 20մ^2, բավարար
3. Դասասենյակ - 32մ^2, բավարար, հագեցվածությունը՝ բավարար
4. Նախակրթարան – 64 մ^2, բավարար, ունի գույքի համալրման կարիք
5. Պահակի սենյակ – 18մ^2, բավարար
6. Նախադպրոցական խմբի սանհանգույց - 20մ^2, ունի վերանորոգման կարիք
7. Անձնակազմի համար նախատեսված սանհանգույց – 7մ^2, ունի վերանորոգման կարիք
8. Աշակերտների սանհանգույց /տղա/ - 12մ^2, ունի վերանորոգման կարիք
9. Աշակերտների սանհանգույց /աղջիկ/ - 12մ^2, ունի վերանորոգման կարիք
10. Պահեստային սենյակ – 12մ^2, բավարար
11. Խոհանոց – 133մ^2, հիմնանորոգվել է 2023 թվականին, ունի գույքի համալրման կարիք
12. Միջանցք – 120մ^2, ունի ջեռուցման կարիք:

Ձախ մասնաշենք

1. Դասասենյակ – 64մ^2, ունի վերանորոգման կարիք
2. Հանդիսությունների սրահ – 85մ^2, ենթակա է վերանորոգման, ունի պատուհանների փոխարինման, ջեռուցման անցկացման և գույքի կարիք
3. Պահեստային սենյակ – 50մ^2, ենթակա է վերանորոգման, ունի պատուհանների փոխարինման, ջեռուցման անցկացման կարիք
4. Աշխատասենյակ – 12մ^2, ենթակա է վերանորոգման, ունի պատուհանների փոխարինման, ջեռուցման անցկացման կարիք
5. Հանդերձարան /տղա / - 12մ^2, ենթակա է վերանորոգման, ունի պատուհանների փոխարինման, ջեռուցման անցկացման կարիք
6. Հանդերձարան /աղջիկ / - 12մ^2, ենթակա է վերանորոգման, ունի պատուհանների փոխարինման, ջեռուցման անցկացման կարիք
7. Պահեստային սենյակ - 25մ^2, ենթակա է վերանորոգման, ունի պատուհանների փոխարինման, ջեռուցման անցկացման կարիք
8. Արհեստանոց – 65մ^2, ենթակա է վերանորոգման, ունի պատուհանների փոխարինման, ջեռուցման, գույքի, սարքավորումների, հաստոցների համալրման կարիք
9. Մարզադահլիճ – 417մ^2, ենթակա է վերանորոգման, ունի պատուհանների փոխարինման, ջեռուցման և գույքի համալրման կարիք
10. Միջանցք – 120մ^2, ունի ջեռուցման անցկացման կարիք:

<u>2-րդ հարկ</u>

Աջ մասնաշենք

1. Դասասենյակ – 32մ^2, ունի վերանորոգման և գույքի համալրման կարիք
2. Դասասենյակ – 32մ^2, ունի վերանորոգման և գույքի համալրման կարիք
3. Դասասենյակ – 32մ^2, ունի վերանորոգման և գույքի համալրման կարիք
4. Դասասենյակ – 32մ^2, ունի վերանորոգման և գույքի համալրման կարիք
5. Դասասենյակ – 32մ^2, ունի վերանորոգման և գույքի համալրման կարիք
6. Դասասենյակ – 32մ^2, ունի վերանորոգման և գույքի համալրման կարիք
7. Ձենքի պահեստային սենյակ – 13մ^2, բավարար, ունի չհրկիզվող պահարան
8. ՆԶՊ կաբինետ – 68մ^2, բավարար
9. Համակարգչային սենյակ – 64մ^2, ունի համակարգչային տեխնիկայի, գույքի համալրման կարիք
10. Պահեստային սենյակ – 64մ^2, ենթակա է վերանորոգման, ունի պատուհանների փոխարինման կարիք
11. Միջանցք - 120մ^2, ունի ջեռուցման անցկացման կարիք:

Ձախ մասնաշենք

1. Դասասենյակ – 64մ^2, բավարար
2. Դասասենյակ – 64մ^2, բավարար
3. Բուժքրոջ սենյակ – 16մ^2, բավարար
4. Դասասենյակ – 32մ^2, բավարար
5. Դասասենյակ – 64մ^2, բավարար
6. Գրադարան – 64մ^2, ենթակա է վերանորոգման, ունի պատուհանների փոխարինման, ջեռուցման անցկացման և գույքի համալրման կարիք
7. Միջանցք - 120մ^2, ունի ջեռուցման անցկացման կարիք
8. Ուսուցչանոց – 21մ^2, ունի վերանորոգման և գույքի համալրման կարիք
9. Աշխատասենյակ - 11մ^2, բավարար
10. Աշխատասենյակ - 13մ^2, բավարար
11. Աշխատասենյակ - 15մ^2, բավարար:

Հ/Հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Դպրոցի ամբողջ տարածքը ցանկապատված է, առանձնացված է ճանապարհային գոտուց, անվտանգ է սովորողների համար	Դպրոցի արտաքին և ներքին լուսավորության ցանցը կարիք ունի արդիականացման, նոր էլեկտրախնայող լամպերով համալրման
2	Առկա է ամբողջովին վերանորոգված ընդարձակ ճաշարան, որտեղ 1-4 դասարանների սովորողների համար	Սենյակների մի մասը, այդ թվում՝ օժանդակ սպասարկող սենյակները, սպորտային և հանդիսությունների

	կազմակերպվում է անվճար սնունդ (նաև տաք սնունդ)	դահլիճները կարիք ունեն նորոգման, դռների և պատուհանների փոխարինման, ջեռուցման համակարգի անցկացման՝ ըստ վերևում ներկայացված ցանկի
3	Առկա է խմելու մշտական ջուր, դպրոցը գազաֆիկացված է, ապահովված է եռաֆազ հոսանքով, ջեռուցումն իրականացվում է անհատական՝ ըստ օգտագործվող սենյակների՝ անհատական ջեռուցման համակարգով	Շենքում բացակայում է ապաստարան
4	Տարհանման համար ունի պահուստային երեք ելքեր, որոնք գործում են	Բացօթյա սպորտային հրապարակը կարիք ունի հիմնանորոգման
5	Ունի 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով այգի՝ պտղատու ծառերով	Տանիքը ենթակա է վերանորգման, առանձին հատվածներում փոխարինման
6	Ստեղծված է սանիտարահիգենիկ բավարար վիճակ, սանհանգույցներն առանձնացված են անձնակազմի և սովորողների համար, այդ թվում՝ տղաների և աղջիկների	Բնագիտական առարկաների համար լաբորատոր սենյակներ նախատեսված չեն և չեն գործում
7	Դպրոցում առկա է արտակարգ իրավիճակներում անձնակազմի տարհանման պլան, որոնք փակցված են համապատասխան տեղերում	Հենաշարժողական խնդիրներ ունեցող սովորողների համար շենքում բացակայում է համապատասխան հարմարեցումները
8	Դասարաններում պահպանված է դասասեղանների միջև առկա անհրաժեշտ հեռավորությունները	
9	Դպրոցի շենքը համապատասխանում է անվտանգության սահմանված պահանջներին	

Դպրոցի 2-րդ հարկի աջ մասնաշենքի երեք դասասենյակ բաժանված են երկուական մասերի՝ արդյունքում ձևավորելով վեց դասասենյակ, որի նպատակը կայանում է ձմռան ամիսներին ջեռուցման գործընթացը տնտեսապես ավելի արդյունավետ կազմակերպելը,

սակայն դասասենյակների դռները տեղադրվել են մյուս սենյակի միջոցով, քանի որ հիմնական պատերի քանդման աշխատանքները լրացուցիչ բարդություններ են առաջացնում: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում առաջիկա տարիներին կկազմակերպի դռների տեղափոխման և դասասենյակների առանձին մուտքերի ապահովմանն ուղղված աշխատանքներ:

2. Դպրոցի նյութատեխնիկական բազայի վերլուծությունը

Դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպման համար առկա են նյութատեխնիկական միջոցներ, որոնք թույլ են տալիս ապահովել դասապրոցեսի անցկացումը, սակայն դրանց քանակը և որակը բավարար չեն դասապրոցեսի արդյունավետությունը էականորեն բարելավելու համար: Մասնավորապես, բոլոր դասասենյակները համալրված են աշակերտական սեղաններով և աթոռներով, պահարաններով, գրատախտակներով, ուսուցչի սեղաններով և աթոռներով: Գույքի մի մասը բարեգործական աջակցությամբ հնարավոր է եղել թարմացնել, իսկ մնացած մասը չնայած օգտագործվում են, այնուամենայնիվ ավելի քան 25 տարիների ընթացքում ֆիզիկապես մաշվել են, և զարգացման ծրագրի իրականացման ընթացքում ենթակա են փոխարինման: 2022 թվականին ԱՄՆ եվրոպական հրամանատարության կողմից նվիրաբերվել է հետևյալ գույքերը՝

1. աշակերտական աթոռ – 50 հատ,
2. աշակերտական սեղան – 50 հատ,
3. ուսուցչի սեղան – 3 հատ,
4. մետաղյա պահարան – 4 հատ:

2021 թվականին «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակում ամբողջությամբ հիմնանորոգվել և մասնակի կահավորվել է դպրոցի ճաշարանը: Ծրագրի շրջանակներում դպրոցին նվիրաբերվել է նաև՝ սառնարան, կենցաղային կշեռք, գազօջախ, էլեկտրական վառարան, ջրատաքացուցիչ, սեղան աշխատանքային, դարակաշար:

Սկսած 2018 թվականից յուրաքանչյուր տարի դպրոցի բարեկամ, ամերիկաբնակ Քրիստինե Սահակյանի կողմից դպրոցի տարրական դասարանների բոլոր սովորողներին տրամադրվում են անհրաժեշտ գրենական պարագաներ:

Դասապրոցեսի ընթացքում բնագիտական առարկաների ուսուցումը գործնական մեթոդներով իրականացնելու համար բացակայում են համապատասխան լաբորատորիաները, լաբորատոր գույքերը և փորձերի համար անհրաժեշտ նյութերը:

Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության հետ համագործակցության արդյունքում դպրոցում գործում է «Արմաթ» ինժիներական լաբորատորիա:

ՏՀՏ սարքավորումներից դպրոցում առկա են 7 (յոթ) համակարգիչ, 2 (երկու) պրոյեկտոր, 2 (երկու) տպիչ և 1 (մեկ) պատճենահանման սարք, որոնք օգտագործվում են ինչպես դպրոցի կառավարման իրականացման, այնպես էլ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և վարչատնտեսական գործունեության ապահովման համար: Դպրոցը կարիք ունի ժամանակակից ՏՀՏ սարքավորումներով համալրման՝ էլեկտրոնային գրատախտակ, նոր սերնդի համակարգիչներ:

Դպրոցի արհեստանոցում առկա են 4 (չորս) հին հաստոցներ, որոնք ներկայումս օգտագործման համար պիտանի չեն, իսկ սպորտային դահլիճը կարիք ունի ինչպես վերանորոգման, այնպես էլ նոր գույքով համալրման:

Դպրոցում գործում է գրադարան, սակայն նոր գրականությամբ համալրում իրականացվում է քիչ քանակությամբ:

Հ/Հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Արմաթ» ինժիներական լաբորատորիան հագեցված է անհրաժեշտ պարագաներով	Լաբորատոր սարքավորումների և նյութերի բացակայություն
2	Ճաշարանի՝ նոր գույքով համալրվածություն	ՏՀՏ նորագույն սարքավորումներով համալրման անհրաժեշտություն
3	Տարրական դասարանների սովորողներին անվճար գրենական պարագաների տրամադրում	Գրադարանային ֆոնդի թարմացման անհրաժեշտություն
4		Սանհանգույցներում զուգարանակոնքերը, լվացարանները և ծորակները ենթակա են փոխարինման
5		Աշակերտական գույքի փոխարինման անհրաժեշտություն

Սույն զարգացման ծրագրի ընթացքում նախատեսում եմ իրականացնել գործուն քայլեր դպրոցի նյութատեխնիկական բազան արդիականացնելու և համալրելու նորագույն սարքավորումներով և գույքով, ինչը կօժանդակի առաջադիմության և կրթության որակի բարելավմանը:

3. Դպրոցի կառավարման մարմինների և տնօրենի համագործակցությունը

Դպրոցի կառավարման մարմինների և տնօրենի համագործակցության ուղղությունները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ[1]: Տնօրենը դպրոցի կառավարումն իրականացնում է սահմանված պահանջներին համապատասխան: Դպրոցը 2023 թվականի սեպտեմբեր ամսից անցում է կատարել կառավարման նոր համակարգին, և դպրոցի կառավարման ուղղությամբ տնօրենի գործառույթները վերաբաշխվել են տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի միջև:

Դպրոցի տնօրենից և վարչատնտեսական մասի համակարգողից բացի դպրոցի կառավարման մարմիններն են՝ հիմնադիրը, նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը, դպրոցի կոլեգիալ կառավարման մարմինը՝ Խորհուրդը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի մարտի 25-ի N 25-Ն հրամանի համաձայն դպրոցում սահմանված կարգով ձևավորվել և գործում է միացյալ խորհուրդ, որն ընդգրկում է 2 (երկու)՝ ՀՀ Լոռու մարզի Սարահարթ և Գոգարան համայնքներում գործող դպրոցները:

Միացյալ խորհուրդը կազմված է 15 անդամից, որի կազմի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝

Հ/Հ	Անուն, ազգանուն	Պաշտոնը	Կրթությունը	Առաջադրող մարմին	Դպրոց/ Համայնք
1	Տաթևիկ Պողոսյան	նախագահ	բարձրագույն		
2	Գրիշա Ղազարյան	անդամ	միջին մասն.	մանկ. խորհուրդ	Գոգարան
3	Արմինե Համբարյան	անդամ	միջին մասն.	մանկ. խորհուրդ	Գոգարան
4	Լիա Հակոբյան	անդամ	բարձրագույն	մանկ. խորհուրդ	Սարահարթ
5	Վարդան Սարգսյան	անդամ	միջին մասն.	մանկ. խորհուրդ	Սարահարթ
6	Մարուս Հարությունյան	անդամ	միջին մասն.	ծնողական խորհուրդ	Գոգարան
7	Նարինե Արշակունի	անդամ	միջնակարգ	ծնողական	Գոգարան

[1] https://www.irtek.am/views/act.aspx?aid=157242

				խորհուրդ	
8	Ֆենյա Հովսեփյան	անդամ	միջին մասն.	ծնողական խորհուրդ	Սարահարթ
9	Գայանե Բարխուդարյան	անդամ	միջին մասն.	ծնողական խորհուրդ	Սարահարթ
10	Սիլվա Պողոսյան	անդամ	միջին մասն.	համայնք	Գոգարան
11	Տաթևիկ Պողոսյան	անդամ	բարձրագույն	համայնք	Սարահարթ
12	Գևորգ Մարգարյան	անդամ	միջնակարգ	ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ	
13	Գևորգ Մելքոնյան	անդամ	բարձրագույն	ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ	
14	Անդրանիկ Թադևոսյան	անդամ	բարձրագույն	ՀՀ ԿԳՄՍՆ	
15	Անուշավան Մարտիրոսյան	անդամ	բարձրագույն	ՀՀ ԿԳՄՍՆ	

Դպրոցի կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, 2022-2023 թվականներին գումարել է 8 (ութ) նիստ, որոնց ընթացքում քննարկվել և հաստատվել են հետևյալ հարցերը՝

1. հաստատվել է խորհրդի աշխատակարգը,
2. քննարկվել է 2021-2022, 2022-2023 ուսումնական տարիների կիսամյակային և տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունները,
3. 2022 և 2023 թվականների ֆինանսատնտեսական գործունեության կիսամյակային և 2022 թվականի՝ տարեկան հաշվետվությունները,
4. 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիներին դպրոցի ներքին գնահատում,
5. 2023 և 2024 թվականների տարեկան ծախսերի նախահաշիվների, բյուջետային ֆինանսավորման հայտի և բյուջեի նախագծերի քննարկում,
6. Հավանություն է տվել աշխատողների տարիֆիկացիոն ցուցակին,
7. Հաստատվել է ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման կարգը յուրաքանչյուր կիսամյակի համար,
8. Դպրոցի եռամսյակային, կիսամյակային և տարեկան բյուջեների կատարողականների (հաշվետվության) քննարկում:

Հ/Հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Տնօրենի կողմից հիմնադրի, ՀՀ ԿԳՄՍ նախարարության, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի, կառավարման խորհդի կողմից ընդունված որոշումների, հրամանների, հանձնարարականների պարտադիր կատարում	Կառավարման խորհդի անդամների կեսից ավելին չունեն բարձրագույն կրթություն
2	Դպրոցի ղեկավարում հիմնադրի և ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից ընդունված օրենսդրական ակտերի և կարգերի պահանջներին համապատասխան	Կառավարման խորհրդի ոչ բոլոր անդամների կողմից իրենց պարտականությունների և իրավունքների պատշաճ իմացություն
3	Տնօրենի կողմից խորհրդակցական ձայնի իրավունքով կառավարման խորհրդի բոլոր նիստերին մասնակցություն	Կառավարման խորհրդի՝ ոչ դպրոցի աշխատակից անդամների մասնակցությունը դպրոցի կառավարմանը սահմանափակվում է միայն նիստերին ներկայանալով և քննարկվող հարցերին քվեարկելով
4	Արդյունավետ համագործակցության առկայություն վարչատնտեսական մասի համակարգողի հետ	Կառավարման խորհրդի անդամների միջև բացակայում է համագործակցությունը
5	Կառավարման մարմինների կողմից ընդունած ակտերի, արձանագրությունների մասին պարտադիր իրազեկում բոլոր շահագրգիռ կողմերին	Կառավարման խորհրդի՝ դպրոցից դուրս այլ աշխատանքով ծանրաբեռնված անդամները հաճախակի են բացակայում նիստերից
6	Կառավարման խորհրդի նիստերի գումարում օրենսդրությամբ սահմանված ժամկետներում	

4. Դպրոցի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցն իր գործունեությունը ծավալում է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սարահարթ գյուղում և գյուղում միակն է: Դպրոցն իր գործունեության ընթացքում համագործակցում է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի և Սարահարթի վարչական ղեկավարի աշխատակազմի հետ՝ նպատակ ունենալով ապահովել դպրոցահասակ բոլոր երեխաների կրթության ստացման իրավունքը: Համագործակցության արդյունքում Սարահարթ գյուղում չկան կրթությունից դուրս մնացած երեխաներ: Համայնքի հետ համագործակցության հաջորդ ուղղությունը սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին աջակցության ծրագրերի մշակումն է: Մյուս ուղղություններով համայնքի հետ համագործակցությունը շատ թույլ է, չեն կազմակերպվում համատեղ սոցիալ-մշակութային միջոցառումներ, դպրոցի խնդիրների լուծման հարցում համայնքի աջակցությունը գրեթե բացակայում է:

Դպրոցում՝ որպես խորհրդակցական մարմին, ըստ կարգի ձևավորված է ծնողական խորհուրդ, որը, սակայն, կանոնադրությամբ վերապահված իր գործառույթները գրեթե չի իրականացնում: Ծնողական խորհրդի ժողովները ձևական բնույթ են կրում, պատշաճ չեն արձանագրվում, դպրոցի կառավարման արդյունավետության և կրթության որակի բարձրացմանն ուղղված առաջարկություններ չեն ներկայացվում: Դպրոց-ծնող կապը հիմնականում ապահովվում է դասղեկների միջոցով, առանձին դասարանների ծնողների հետ հանդիպումների, ժողովների կազմակերպմամբ, ցածր է ծնողական նախաձեռնությունների մակարդակը: Տարրական դասարանների սովորողների ծնողները ֆինանսական մասնակի ներդրում ունեն երեխաներին տաք սնունդով ապահովելու գործընթացին:

Դպրոցը ղեկավարվում է ՀՀ կառավարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ընդունված որոշումներով, կարգերով, չափորոշիչներով, ծրագրերով: Համագործակցությունը հատկապես արդյունավետ է ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության հետ, որը հանդիսանում է դպրոցի և կրթության կառավարման մարմինների հիմնական կապող օղակը: Դպրոցի

տնօրենը պատշաճ կարգով կատարում է ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմից ստացված հանձնարարականները, սահմանված ժամկետներում ներկայացնում է պահանջված տեղեկատվությունները, հաշվետվությունները, մասնակցում է անցկացվող խորհրդակցություններին: Մինչև 2023 թվականի սեպտեմբեր ամիսը տնօրենը մարզպետի աշխատակազմին էր ներկայացնում նաև դպրոցի տարեկան ծախսերի նախահաշիվները, գնումների պլանները, դրանցում կատարվող փոփոխությունները և այլն, իսկ ներկայումս արդեն այդ գործառույթները փոխանցվել են վարչատնտեսական մասի համակարգողին:

Հաշվի առնելով, որ դպրոցում կրթություն է ստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 3 (երեք) սովորող, դպրոցն ակտիվ համագործակցում է տարածքային մարկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի աշխատակիցների հետ:

Դպրոցը կցված է ՀՀ պաշտպանության նախարարության թիվ N զորամասին, որի զինծառայողները տարեկան մի քանի անգամ դպրոցում հանդես են գալիս ռազմահայրենասիրական թեմաներով դասախոսություններով, զեկույցներով, դպրոցի աշակերտներն այցելում են զորամաս, ծանոթանում զինծառայողների առօրյային, զենքի օգտագործման կանոններին և այլն:

Դպրոցը համագործակցում է Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության հետ և դպրոցում գործում է «Արմաթ» ինժիներական լաբորատորիա:

Դպրոցի հետ համագործակցող այլ կազմակերպություններից են՝ կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը, գնահատման և թեստավորման կենտրոնը, կրթության զարգացման և նորարությունների ազգային կենտրոնը:

Հ/Հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Դպրոցը ղեկավարվում է ՀՀ կառավարության և ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ընդունված նորմատիվ և անհատական իրավական ակտերով	Ծնողական խորհրդի մասնակցությունը աշակերտների ուսուցման գործընթացում գրեթե բացակայում է
2	Առկա է համագործակցություն ՀՀ պաշտպանության նախարարության, «Արմաթ» ինժիներական լաբորատորիայի, տարածքային կառավարման մարմնի, ԿՏԱԿ-ի, ԳԹԿ-ի, ՏՄԱԿ-ի հետ	Համայնքի հետ չեն կազմակերպվում սոցիալ-մշակութային միջոցառումներ
3	Սարահարթ գյուղում չկան կրթությունից դուրս մնացած երեխաներ	Սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող աջակցությունները բավարար չեն
4	Իրականացվում են սոցիալական ծրագրեր անապահով ընտանիքների սովորողների համար, օրինակ գրքերի դիմաց վճարների մասնակի կամ ամբողջական փոխհատուցում	Փորձի փոխանակման նպատակով այլ դպրոցների հետ համագործակցությունը բացակայում է
5	Առկա է համագործակցություն բարեգործների և բարեգործական կազմակերպությունների հետ (մանրամասն նշված է 1 և 2 բաժիններում)	Արտադպրոցական ուսուցման արդյունավետ կազմակերպման հարցում շատ ցածր է ծնողների ներգրավվածությունը

5. Դպրոցի մանկավարժական համակազմը

Դպրոցում խիստ կարևորվում է կրթական գործընթացի մասնակիցներից ուսուցիչների և մանկավարժական այլ աշխատողների դերն արդյունավետ և որակապես բարձր մակարդակի ուսուցում կազմակերպելու համար: Ներկայումս դպրոցը համալրված է բոլոր անհրաժեշտ մասնագիտական կադրերով: Ստորև աղյուսակներում ներկայացված տվյալներով բացահայտենք դպրոցի մանկավարժական համակազմի առկա մասնագիտական որակները, իսկ դրանց ամփոփ վերլուծությունը ձևակերպենք մանկավարժական համակազմի ուժեղ և թույլ կողմերի ներկայացմամբ:

Հ/Հ	Անուն, ազգանուն	Ծննդյան տարեթիվ	Մանկավար-ժական ստաժ	Կրթու-թյունը	Վերջին 3 տարիներին պարտադիր վերապատ. մասնակցած	Կամավոր ատեստա-վորված	Առարկա
1	Արթուր Հալաջյան	1990	11	բարձր.	v		շախմատ
2	Եղիշե Հալաջյան	1989	11	բարձր.	v		պատմ.
3	Սանամ Բարիկյան	1973	30	բարձր.	v		հ.լ., գրակ.
4	Նելի Ոսկանյան	1972	28	բարձր.	v		հ.լ., գրակ.
5	Ալվարդ Սարգսյան	1973	30	բարձր.	v		Օտար լեզու
6	Արմենուհի Փիլոյան	1973	32	բարձր.	v		ֆիզիկա
7	Էլմիրա Գալստյան	1983	21	բարձր.	v		մաթեմ.
8	Արմինե Հարությունյան	1968	19	բարձր.	v		մաթեմ.
9	Ազնիվ Ոսկանյան	1990	12	բարձր.	v		աշխարհ.
10	Լիա Հակոբյան	1958	45	բարձր.	v		դասվար

11	Աիդա Փիլոյան	1966	36	միջ. մասն.	v	v	դասվար
12	Արմենուհի Գրիգորյան	1984	2	բարձր.	v		դասվար
13	Նունե Հայրապետյան	1997	2	բարձր.			դասվար
14	Սաթենիկ Փիլոսյան	1991	11	բարձր.	v	v	հասարակ.
15	Հերիքնազ Սիմոնյան	1993	7	բարձր.	v		քիմիա
16	Գայանե Ղուկասյան	1960	43	միջ. մասն.	v	v	տեխնոլոգ.
17	Անի Հովհաննիսյան	1990	0	բարձր.			ռուսաց լեզու
18	Անուշ Յարմալոյան	1964	36	բարձր.	v		ռուսաց լեզու
19	Վարդան Սարգսյան	1963	40	միջ. մասն	v		ՆԶՊ
20	Հեղինե Խումարյան	1993	8	բարձր.			ուսուցչի օգնական
21	Անուշ Քոթանջյան	1991	0	բարձր.			հոգեբան
22	Եղսան Մարկոսյան	1964	37	միջ. մասն			գրադար.

Հ/Հ	Տարիքային միջակայք	Մանկավարժների թիվը	Տոկոսն ընդհանուրի մեջ
1	20 – 30 տարեկան	1	4,5%
2	30 – 40 տարեկան	9	40,9%
3	40 – 50 տարեկան	4	18,2%
4	50 – 60 տարեկան	6	27,3%
5	60 – ից բարձր տարեկան	2	9,1%
Ընդամենը		**22**	**100,0%**

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշ	Տոկոսն

		ընդհանուրի մեջ
Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչներ	18	81,8 %
Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչներ	22	100 %
Տարակարգ ունեցող ուսուցիչներ	-	-
Գիտական կոչում ունեցող ուսուցիչներ	-	-
Նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչներ	17	77,3 %
Որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչներ	-	-
Ուսուցիչների միջին տարիքը	44,6 տարեկան	
Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչներ	12	54,5 %
Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ինտերնետ, կիրառող ուսուցիչներ	12	54,5 %
Սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչներ	5	22,7 %

Հ/Հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Ուսուցիչների գերակշռող մասն ունի բարձրագույն մանկավարժական կրթություն	Ոչ բոլոր ուսուցիչներն են կիրառում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, իսկ կիրառող ուսուցիչները կարիք ունեն վերապատրաստումների
2	Ուսուցիչներից 3 հոգի մասնակցել են կամավոր ատեստավորմանը և բարձր միավորներով հաղթահարել են անցողիկ շեմը	Ուսուցիչների կողմից փոխադարձ դասալսումներ գրեթե չեն իրականացվում
3	Միջին մասնագիտական կրթություն ունեցող 4 մանկավարժներից յուրաքանչյուրն ունի ավելի քան 36 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժ	Կամավոր ատեստավորմանը մասնակցության ցածր տոկոս
4	Միջին մասնագիտական կրթություն ունեցող 4 մանկավարժներից 2-ը մասնակցել են կամավոր ատեստավորմանը և բարձր միավորներով հաղթահարել են անցողիկ շեմը	Դպրոցում վերապատրաստող կամ տարակարգ ունեցող ուսուցիչներ չկան
5	Ուսուցիչների կողմից վերապատրաստումներին մասնակցության բարձր տոկոս	Մանկավարժական համակազմում թափուր հաստիք առաջանալու դեպքում նոր մասնագետներով համալրման դժվարություններ, հաշվի առնելով նաև մասնագետների մեծ արտահոսքը համայնքից
6	Ուսուցչական կազմի ավելի քան 70 տոկոսն ունի 10 և ավելի տարիների մանկավարժական աշխատանքային փորձ	
7	Բոլոր ուսուցիչների կողմից պարտադիր մշակվում են դասերի թեմատիկ պլաններ, մեթոդական միավորումները ցուցաբերում են անհրաժեշտ մասնագիտական աջակցություն	

6. Դպրոցում օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաներ ու նորարարություններ

Սովորողների կրթվածության աստիճանը պայմանավորող գործոններից է հանդիսանում ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունը, որի շրջանակներում խիստ կարևորվում է ուսուցման գործընթացում ժամանակակից պահանջներին համապատասխան կրթական տեխնոլոգիաների և նորարարությունների կիրառումը: Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը միաժամանակ կարևորվում է նաև դպրոցի արդյունավետ կառավարման աշխատանքներում:

Դպրոցում ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը հիմնականում սկսվել է 2020 թվականից՝ համավարակով պայմանավորված առցանց դասերի կազմակերպման արդյունքում: Դպրոցի բոլոր մանկավարժներն ունեն տեղեկատվական հաղորդակցման տենոլոգիաներից օգտվելու նվազագույն գիտելիքներ, որոնք հիմնականում սահմանափակվում են էլեկտրոնային մատյանների վարմամբ, թեմատիկ պլանների կազմամբ, ուսուցման ընթացքում առանձին էլեկտրոնային վիդեոդասընթացների օգտագործմամբ, սակայն փոքր մաս է կազմում ուսուցման ընթացքում ՏՀՏ միջոցներ կիրառող ուսուցիչների թիվը՝ 12 ուսուցիչ, կամ համակարգիչների օգտագործմամբ տնային հանձնարարականներ հանձնարարող ուսուցիչների թիվը՝ ընդամենը 5 ուսուցիչ: Այստեղ էական խոչընդոտ է հանդիսանում նաև սովորողների ընտանիքների սոցիալական վիճակը, որի հետևանքով ոչ բոլոր ընտանիքներում կան համակարգիչներ, կամ ինտերնետ հասանելիություն: Դպրոցում քիչ են ՏՀՏ սարքավորումները, առկա են 7 (յոթ) համակարգիչ, 2 (երկու) պրոյեկտոր, 2 (երկու) տպիչ և 1 (մեկ) պատճենահանման սարք, որոնք միաժամանակ օգտագործվում են դպրոցի ուսումնական գործընթացում և դպրոցի կառավարման և վարչատնտեսական (այդ թվում՝ հաշվապահության վարման) աշխատանքներում: Համակարգիչներն էլ արդեն հնամաշ են, և հաճախակի առաջանում է վերանորոգման և սպասարկման անհրաժեշտություն:

Դպրոցում 2021 թվականից սկսած գործում է «Արմաթ» ինժիներական լաբորատորիա, որն իր մեծ դերակատարությունն ունի նաև աշակերտների հետագա մասնագիտական կողմնորոշման ձևավորման հարցում:

ՏՀՏ տեխնոլոգիաները դպրոցում հիմնականում օգտագործվում են դպրոցի կառավարման և վարչատնտեսական գործունեության ոլորտներում՝ էլեկտրոնային հաղորդակցություն կառավարման մարմինների հետ, հիմնական փաստաթղթերի էլեկտրոնային վարում, հաշվետվությունների կազմում, հաշվապահական հաշվառման վարում և այլն:

Ստորև ներկայացվում է ուսումնադաստիարակչական աշխատանքներում ՏՀՏ կիրառման ուժեղ և թույլ կողմերը

Հ/Հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Բոլոր ուսուցիչները օգտագործում են https://emis.am/ էլեկտրոնային հարթակը՝ պարտադիր լրացնելով էլեկտրոնային մատյանը	Ուսուցիչների մի մասը դասապրոցեսի ընթացքում ՏՀՏ միջոցների կիրառումը համարում են լրացուցիչ ծանրաբեռնվածություն
2	«Արմաթ» ինժիներական լաբորատորիան էապես նպաստում է սովորողների տեխնիկական գիտելիքների ավելացմանը և մասնագիտական կողմնորոշմանը	Սովորողների և ծնողների միայն փոքր մասն է հետևում https://emis.am/ հարթակում էլեկտրոնային օրագրերին
3	Դասի թեմատիկ պլանների էլեկտրոնային կազմում, չնայած երբեմն հայտնաբերվում են որոշակի թերություններ	ՏՀՏ գործիքներ կիրառող ուսուցիչների տոկոսը ցածր է
4	Դպրոցում ՏՀՏ բավարար գիտելիքներ ունեցող ուսուցիչների կողմից մյուս ուսուցիչներին օգնելու պատրաստակամություն	Դասապրոցեսի ընթացքում ՏՀՏ սարքավորումների ոչ նպատակային օգտագործման դեպքերի առկայություն
5	Ուսուցիչների կողմից մասնագիտական որակների բարձրացման նպատակով համակարգչի օգտագործմամբ առցանց հարթակներում իրականացվում են տարբեր ուսումնական, հետազոտական նյութերի ուսումնասիրություններ	Նորագույն լաբորատորիաների բացակայության բացասական ազդեցություն ունի բնագիտական առարկաների որակի վրա
6		ՏՀՏ կիրառմամբ բաց դասեր չեն կազմակերպվում

Ստորև ներկայացվում է կառավարման ոլորտում ՏՀՏ կիրառման ուժեղ և թույլ կողմերը՝

Հ/Հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Դպրոցն ունի պաշտոնական կայք՝ https://sarahart.schoolsite.am/	Պաշտոնական կայքում տեղեկատվության թարմացումներ շատ քիչ են կատարվում
2	Կրթական կառավարման մարմինների հետ էլեկտրոնային հաղորդակցության ապահովում՝ հանձնարարականների ստացում, կատարում, իրավական ակտերի ուսումնասիրում	Կառավարման մարմինների որոշումները, արձանագրությունները պատշաճ կարգով չեն հրապարակվում դպրոցի կայքում
3	Ուսումնադաստիարակչական աշխատանքների, դպրոցի ներքին գնահատման էլեկտրոնային հաշվետվությունների պատրաստում	ՏՀՏ կարողունակությունների զարգացման ուղղված վերապատրաստումների, դասընթացների բացակայություն
4	https://emis.am/ էլեկտրոնային հարթակի օգտագործում	

Ստորև ներկայացվում է վարչատնտեսական գործունեության ոլորտում ՏՀՏ կիրառման ուժեղ և թույլ կողմերը՝

Հ/Հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Դպրոցի հաշվապահական հաշվառումն ամբողջությամբ իրականացվում է էլեկտրոնային, հաշվապահական ծրագրի օգտագործմամբ	Համակարգչային տեխնիկան հնամաշ է և ենթակա է թարմացման
2	Ինտերնետ կապի առկայություն	ՏՀՏ նորագույն սարքավորումների բացակայություն, օրինակ՝ էլեկտրոնային գրատախտակ
3	Համակարգչային տեխնիկայի ըստ անհրաժեշտության վերանորոգման աշխատանքների իրականացում	Դպրոցի համակարգիչները պաշտպանված չեն կիբերհարձակումներից
4	Ֆինանսական հաշվետվությունների	

	հրապարակում դպրոցի պաշտոնական կայքում	

7. Դպրոցի աշակերտական համակազմը և կրթության որակը

Դպրոցում սովորողների թվաքանակը 2023-2024 ուսումնական տարում ըստ դասարանների կազմում է՝

Հ/Հ	Դասարան	Սովորողների թիվը
1	1-ին դասարան	6
2	2-րդ դասարան	16
3	3-րդ դասարան	9
4	4-րդ դասարան	9
5	5-րդ դասարան	13
6	6-րդ դասարան	15
7	7-րդ դասարան	11
8	8-րդ դասարան	11
9	9-րդ դասարան	15
10	10-րդ դասարան	1
11	11-րդ դասարան	8
12	12-րդ դասարան	8
ԸՆԴԱՄԵՆԸ		**119**

Դպրոցում՝ վերջին 5 տարիների ընթացքում աշակերտների շարժը ներկայացվում է ստորև՝

Հ/Հ	Ուսումնական տարի	Ընդունված աշակերտների թիվ	Ավարտած աշակերտների թիվ	ԲՈՒՀ ընդունված աշակերտների թիվ
1	2018-19	22	4	3
2	2019-20	20	7	3

3	2020-21	9	13	5
4	2021-22	8	5	2
5	2022-23	15	8	3
6	2023-24	6		

Ստորև ներկայացնենք 12-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքների վերլուծություն վերջին 3 տարիների համար՝

	2020-2021 ուսումնական տարի			2021-2022 ուսումնական տարի			2022-2023 ուսումնական տարի		
	Հայոց պատմու-թյուն	Հայոց լեզու և գրակա-նություն	Մաթեմա-տիկա	Հայոց պատմու-թյուն	Հայոց լեզու և գրակա-նություն	Մաթեմա-տիկա	Հայոց պատմու-թյուն	Հայոց լեզու և գրակա-նություն	Մաթեմա-տիկա
ՍՈՎՈՐՈՂՆԵՐ	14	17	16	13	11	14	8	8	8
	12	16	16	12	14	18	20	20	19
	14	16	15	11	10	8	10	11	18
	14	17	16	11	8	9	9	9	11
	12	11	13	11	9	8	8	8	9
	12	13	15				8	8	11
	14	16	16				8	12	11
	15	18	17				18	18	12
	13	15	15						
	16	16	16						
	11	14	14						
	11	13	12						
	12	14	14						
Միջին միավորը	**13,1**	**15,1**	**15,0**	**11,6**	**10,4**	**11,4**	**11,1**	**11,8**	**12,4**

Վերջին 3 տարիների 12-րդ դասարանի ավարտական քննական գնահատականների վերլուծությունից տեսանելի է, որ առկա է առաջադիմության նվազման միտում:

Հ/Հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Դպրոցում ուսումնական պլանները մշակվում են էլեկտրոնային եղանակով՝ նոր չափորոշչային պահանջներին համապատասխան	Դպրոցում չի իրականացվել արտաքին գնահատում
2	Մշակվում են օրական դասապլաններ	Մարզային և հանրապետական օլիմպիադաներին գրեթե մասնակցություն չի լինում
3	Յուրաքանչյուր ուսումնական տարի կան բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված սովորողներ	Բացակայում են արտադասարանական խմբակներ
4	Սովորողների առաջադիմության վերաբերյալ քննարկումներ են կազմակերպվում մեթոդական միավորումներում	Մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ չեն կազմակերպվում
5	Յուրաքանչյուր կիսամյակ տնօրենության կողմից տրվում են գրավոր աշխատանքներ	
6	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար իրականացվում է առանձին գնահատում	

8. Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրը

Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով, կրթական գործընթացի առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2.1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք:

Դպրոցն ընդգրկված է ներառական կրթությունն ապահովող ուսումնական հաստատությունների ցանկում, և դպրոցում կրթություն են ստանում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 3 սովորող: Նրանց ուսուցումը կազմակերպվում է ընդհանուր խմբերում՝ չառանձնացնելով հասակակիցներից: Նրանց կրթության արդյունավետության ապահովման նպատակով կազմվում են ուսուցման առանձին ծրագրեր, ակտիվ համագործակցություն է իրականացվում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի աշխատակիցների հետ:

Դպրոցում ներկայումս ակտիվ աշխատանքներ են տարվում դպրոցի կառավարման մասնակցային միջավայրի ձևավորման համար, որտեղ կընդգրկվեն բոլոր շահառու խմբերը: Մինչ օրս խորհրդակցական մարմինները շատ պասիվ դերակատարություն են ունեցել ուսուցման գործում, նրանց ձևավորումը կրել է ֆորմալ բնույթ, համագործակցությունը դպրոցի հետ եղել է նվազագույն: Աշակերտական և ծնողական խորհուրդների համար կազմակերպվում են ուսուցանող քննարկումներ, որտեղ ներկայացվում են նրանց իրավունքները, պարտականությունները, խորհուրդների աշխատակարգերը, դպրոցի համար կարևորություն ներկայացնող հարցերը քննարկման առարկա են դարձվում խորհուրդներում, խրախուսվում են առաջարկությունների ներկայացումները, պարզաբանվում են մտահոգությունները:

Դպրոցում վերջին երկու տարիների ընթացքում բռնության, օտարման կամ հալածանքի գրանցված դեպքեր առկա չեն: Այդպիսի բոլոր դրսևորման փորձերը

կանխարգելվել են դեռևս ամենավաղ շրջանում՝ ի շնորհիվ անձնակազմի աչալուրջ և հետևողական աշխատանքի:

Տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանով նախատեսվում են մի շարք միջոցառումներ՝ ուղղված բռնության, հալածանքի, օտարման, թմրամոլության, ալկոհոլի, ծխախոտի դեմ պայքարին, որոնց սովորողներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում: Այդպիսի միջոցառումների թիվը տարեկան գերազանցում են շուրջ 10-ը, որոնք ունենում են էական դրական ազդեցություն այդպիսի դեպքերի կանխարգելմանը, որի վառ օրինակը դպրոցում այդպիսի դեպքերի բացակայությունն է:

Հ/Հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Դպրոցում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար հարմարեցումները խիստ սահմանափակ են
2	Դպրոցում մարդը դիտարկվում է որպես մեծագույն արժեք	Դպրոցում կան ուսումնառությունից հետ մնացող սովորողներ, որոնց ուսուցման համար անհրաժեշտ է կազմակերպել երկարօրյա ուսուցման խմբակներում ուսուցում
3	Տնօրենը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է կառավարման, աշակերտական, ծնողական խորհուրդների նիստերին	Սովորողները, ծնողները բավարար մակարդակով չեն տիրապետում իրենց իրավունքներին ու պարտականություններին
4	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները գտնվում են մշտական ուշադրության կենտրոնում	Մինչև այս ուսումնական տարին սկսելը դպրոցում չեն ապահովվել որոշումների կայացման մասնակցայնության սկզբունքը
5	Դպրոցում իրականացվում է բռնության, օտարման, հալածանքի կանխարգելմանն ուղղված բավարար աշխատանք	Դպրոցում բացակայում է ռեսուրս-սենյակ
6	Ուսուցիչների մեծ մասը վերապատրաստված է ներառական կրթության կազմակերպման	

	թեմաններով	
7	Խրախուսվում է խոսքի ազատությունը	

9. Դպրոցում աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները

Հ/Հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Դպրոցում ձևավորված է անձնակազմի թիմային մթնոլորտ	Որոշ ուսուցիչներ գրեթե ժամանակ չեն հատկացնում ինքնակրթությամբ զբաղվելուն
2	Մանկավարժական համակազմը մասնակցում է վերապատրաստումների, դասընթացների	Ցածր է սեփական նախաձեռնությամբ վերապատրաստումներին մասնակցության աստիճանը
3	Մանկավարժների նկատմամբ առկա է ձևավորված հանրային բարձր վստահություն	Աշխատակազմին ֆինանսական խրախուսման համար միջոցները շատ փոքր են
4	Դպրոցում աշխատում են կամավոր ատեստավորման շեմը հաղթահարած 3 մանկավարժներ	Աշխատակազմի արժևորման և խրախուսման կարգի բացակայություն
5	Անձնակազմի բարձր ցուցանիշներ արձանագրած անդամները տարեկան արդյունքներով խրախուսվում է շնորհակալագրերով, պատվոգրերով	Որոշ դեպքերում առկա են նաև սոցիալական խնդիրներ ինքնակրթությամբ զբաղվելու համար
6	Տնօրենության կողմից նախաձեռնողականություն այլ դպրոցների հետ համագործակցությունների ձևավորմամբ ուսուցիչների փորձի փոխանակում	Դպրոցի տարեկան ծախսերում մասնագիտական պատրաստվածությանն ուղղված ծախսերն աննշան են, և հաճախ չեն կարողանում ապահովել ինքնակրթության համար բավարար պայմաններ
7	Փորձառու ուսուցիչների կողմից սկսնակ ուսուցիչներին աջակցության ցուցաբերում	

10. Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն

Դպրոցի ծախսերի վերլուծությունը կատարել ենք 2020-2022թթ. ամբողջական տարիների և 2023 թվականի 11 ամիսների համար: Բացահայտել ենք ծախսային յուրաքանչյուր ուղղության տեսակարար կշիռը տարեկան ընդհանուր ծախսերում: Եվ այստեղ հատկանշական է այն հանգամանքը, որ ծախսերի գերակշիռ մասը, ընդհանուր բյուջեի ավելի քան 90 տոկոսը բաժին է ընկնում աշխատողների աշխատավարձերի վճարման ծախսերին: Մասնագիտական վերապատրաստումների գծով ծախսերը կազմում են ընդամենը 0,2 տոկոս, կամ շուրջ 140 հազար դրամ:

Հ/Հ	Ծախսային ուղղություն	2020թ.	2021թ.	2022թ.	30.11.2023թ.	Տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում			
						2020թ.	2021թ.	2022թ.	30.11.2023թ.
1	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	44 703,7	45 146,9	44 004,2	37 730,3	93,5%	92,1%	89,5%	90,8%
2	Էներգետիկ ծառայություններ	2 126,0	2 616,0	2 608,4	2 057,9	4,4%	5,3%	5,3%	5,0%
3	Կապի ծառայություններ	57,6	55,1	57,6	-	0,1%	0,1%	0,1%	0,0%
4	Այլ տրանսպորտային ծախսեր	80,6	128,0	138,4	93,6	0,2%	0,3%	0,3%	0,2%
5	Համակարգչային ծառայություններ	26,0	3,0	35,6	26,0	0,1%	0,0%	0,1%	0,1%
6	Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	95,0	65,6	120,0	-	0,2%	0,1%	0,2%	0,0%
7	Տեղեկատվական ծառայություններ	16,0	27,0	13,0	30,0	0,0%	0,1%	0,0%	0,1%
8	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	3,2	95,0	27,9	25,0	0,0%	0,2%	0,1%	0,1%
9	Մասնագիտական ծառայություններ	31,8	75,6	139,4	72,6	0,1%	0,2%	0,3%	0,2%
10	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	83,5	386,8	281,5	110,0	0,2%	0,8%	0,6%	0,3%
11	Մեքենասարքա-վորումների ընթացիկ նորոգում և պահպանում	-	9,0	-	88,0	0,0%	0,0%	0,0%	0,2%
12	Գրասենյակային նյութեր	83,1	92,5	98,3	183,2	0,2%	0,2%	0,2%	0,4%

13	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	41,5	82,3	1 520,1	901,4	0,1%	0,2%	3,1%	2,2%
14	Հատուկ նպատակային այլ նյութեր	123,3	92,3	-	121,9	0,3%	0,2%	0,0%	0,3%
15	Պարտադիր վճարներ	152,9	146,6	117,8	116,2	0,3%	0,3%	0,2%	0,3%
16	Վարչական սարքավորումներ	208,0	-	-	-	0,4%	0,0%	0,0%	0,0%
ԸՆԴԱՄԵՆԸ		**47 832,1**	**49 021,7**	**49 162,2**	**41 556,2**	**100,0%**	**100,0%**	**100,0%**	**100,0%**

Հ/Հ	**Ցուցանիշ**	**2023թ. 11 ամիսներ**
1	Սովորող/ուսուցիչ հարաբերություն	5,4
2	Սովորող/սպասարկող անձնակազմ հարաբերություն	17
3	Դասարանների միջին խտություն	9,9
4	Մեկ սովորողի հաշվով 11 ամիսների միջին ծախս	349,2 հազար դրամ

Դպրոցի կրթական կարիքները

Դպրոցի առկա վիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել հետևյալ կրթական կարիքները՝

Կառավարում

1. Դպրոցի գործունեության պարբերաբար իրավիճակային վերլուծության իրականացում, թույլ կողմերի բացահայտում, բարելավման համապատասխան միջոցառումների իրականացում,
2. Դպրոց-ընտանիք, դպրոց-համայնք կապի ամրապնդում, ծնողների ուսումնական գործընթացի մեջ առավելագույնս ներգրավում,
3. Դպրոցի կառավարման մասնակցայնության միջավայրի ապահովում,
4. Հանրակրթության նոր չափորոշչի ներդման միջոցառումների իրականացում,
5. Մանկավարժների համար ինքնակրթության համար նպաստավոր պայմանների ստեղծում և անհրաժեշտ միջոցներով ապահովում,
6. Մանկավարժների շարունակական վերապատրաստումների կազմակերպում,
7. Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը նպաստող միջոցառումների անցկացում,

Ուսումնադաստիարակչական աշխատանքներ

8. Երկարօրյա ուսուցման խմբակների կազմակերպում,
9. Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառում, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը դասապրոցեսի ընթացքում ավելացում,
10. Գործնական ուսուցման կիրառում,
11. Արտադպրոցական և արտադասարանական միջոցառումների անցկացում,
12. Իրականացնել սովորողների մնացորդային գիտելիքների պարբերաբար ստուգում,
13. Ավելացնել ուսուցիչների միջև փոխգործակցությունը, կազմակերպել փոխադարձ դասալսումներ, փոխանակվել փորձով,
14. Ուսումնադաստիարակչական միջոցառումների իրականացում,

Վարչատնտեսական գործունեություն

15. Ծրագրի իրականացման համար ծրագրով նախատեսված նյութատեխնիկական բազայի ապահովում, շենքային պայմանների բարելավում,
16. Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման ուղղությունների բացահայտում:

Դպրոցի գործունեության համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին եվ հնարավորություններին

Դպրոցի գործունեությունը համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին և հնարավորություններին, և դպրոցը լիարժեքորեն ապահովում է պետության կրթական քաղաքականության իրականացումը, որի ուղղությունները մանրամասն ներկայացված են զարգացման ծրագրում:

Դպրոցի գործունեության համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին եվ ներուժին

Դպրոցի շենքը կառուցվել է 1992 թվականին, իսկ շահագործման է հանձվել 1993 թվականին: Շենքը տիպային երկհարկանի կառույց է, բաղկացած աջ և ձախ մասնաշենքերից և նախատեսված է 327 սովորողի միաժամանակյա ուսուցում կազմակերպելու համար: Շենքի ընդհանուր մակերեսը կազմում է 3003,5 քառակուսի մետր, իսկ հողամասի մակերեսը՝ 8330 քառակուսի մետր: Դպրոցը հարմարեցված չէ հենաշարժողական խնդիրներ ունեցող սովորողների համար:

Դպրոցում գործում են սանհանգույցներ՝ առանձնացված տղաների, աղջիկների և անձնակազմի համար, սակայն ունեն վերանորոգման կարիք:

Դպրոցում բնագիտական լաբորատորիաներ չեն գործում, գործում է միայն <<Արմաթ>> ինժեներական լաբորատորիան:

Դպրոցում կա բժշկական սենյակ, որը սակայն հագեցած չէ համապատասխան սարքավորումներով և նյութերով:

Դպրոցում բացակայում են առարկայական կաբինետները:

Դպրոցում առկա է արհեստանոց, որը սակայն համալրված չէ աշխատունակ սարքավորումներով:

Դպրոցում առկա է ճաշարան, որտեղ 2021 թվականից սկսած «Տաք սնունդ» ծրագրի շրջանակներում նախակրթարանի և 1-4 դասարանների սովորողներին տրամադրվում է տաք սնունդ: Ճաշարանը հիմնականում ապահովված է անհրաժեշտ տեխնիկայով և գույքով:

Դպրոցում ջեռուցումն իրականացվում է անհատական ջեռուցմամբ, ձմռան ամիսներին ջերմաստիճանը նորմայի միջակայքում է:

Ենթակառուցվածքների վերլուծությունն առավել մանրամասն ներկայացված է դպրոցի շենքային պայմանների վերլուծության բաժնում:

Դպրոցն իր գործունեությունն իրականացնում է հետևյալ մարդկային ռեսուրսներով՝

	Հաստիքի անվանումը	Հաստիքների թիվը
1	Տնօրեն	1
2	Վարչատնտեսական մասի համակարգող	1
3	Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ	0,75
4	Մասնագիտական կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ	0,75
5	Մանկավարժներ	17
6	Դաստիարակ	1
7	Հոգեբան	0.75
8	Օպերատոր	0.75
9	Անձնակազմի կառավարման մասնագետ	1
10	Գրադարանավար	1
11	Հաշվապահ	1
12	Ուսուցչի օգնական	0.75
13	Զինղեկ	1
14	Տեխնիկական անձնակազմ	2.5
16	Պահակ	2
17	Խոհարար	0.5
Ընդամենը		31.25

ՆՊԱՏԱԿ 1

Դպրոցում բարենպաստ ֆիզիկական միջավայրի ստեղծում:

Խնդիրներ

1. Շենքային պայմանների բարելավում,
2. Նյութատեխնիկական բազայի համալրում:

Գործողություններ

1. Դպրոցի դասասենյակների վերանորոգում,
2. Դպրոցի սպորտային և հանդիսությունների դահլիճների վերանորոգում,
3. Դպրոցի տանիքի նորոգում,
4. Դպրոցի սանհանգույցների նորոգում, գույքի փոխարինում,
5. Դպրոցում բնագիտական լաբորատոր սենյակների ստեղծում,
6. Սպորտային խաղահրապարակի բարեկարգում,
7. Լուսավորության ցանցի վերազինում,
8. Լաբորատոր նոր գույքի ձեռքբերում,
9. ՏՀՏ ժամանակակից սարքավորումների ձեռքբերում,
10. Գրադարանի համալրում,
11. Աշակերտական գույքի վերազինում:

Ռիսկեր

1. Ֆինանսական միջոցների բացակայություն:

Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ

1. Բանակցել հովանավորներ, բարեգործներ գտնելու ուղղությամբ:

Ժամանակացույց, պատասխանատու, անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ

Այս նպատակի ապահովմանն ուղղված գործողությունների իրականացումը պետք է կատարի վարչատնտեսական մասի համակարգողը, սակայն ակնհայտ է, որ այստեղ ներառված են կապիտալ բնույթի մեծ ֆինանսական միջոցներ պահանջող աշխատանքներ, որոնք հնարավոր չէ իրականացնել դպրոցի բյուջեով, ուստի պետք է աջակցել համակարգողին բարեգործական ընկերություններ, անհատ բարերարներ գտնելու կամ նորոգման աշխատանքները պետական ծրագրերում ընդգրկելու համար:

Դպրոցն իր տարեկան բյուջեով կարող է իրեն թույլ առավելագույնը 1-2 դասարանի վերանորոգում, 1-2 համակարգչային տեխնիկայի ձեռքբերում, տանիքի մասնակի նորոգում, սանհանգույցների նորոգում, աշակերտական գույքի մասնակի փոխարինում:

Յուրաքանչյուր ուսումնական տարի կառաջարկվի համակարգողին այս խումբ աշխատանքներից իրականացնել առավել հրատապները, մյուս մասերի համար կտարվեն բանակցություններ այլ ֆինանսական միջոցների աղբյուրներ գտնելու համար, որի համար կպահանջվի աշխատանքային նախագծերի, նախահաշվների կազմում, գրությունների կազմում և ուղարկում, տեխնիկական բնութագրերի կազմում և այլն:

Ակնկալվող արդյունքներ

Բարենպաստ և անվտանգ ֆիզիկական միջավայր:

Գնահատման չափանիշներ

1. Շենքային բավարար պայմաններ կրթական գործընթացի կազմակերպման համար,
2. Նյութատեխնիկական բավարար միջոցներ կրթության որակական աճի ապահովման համար,
3. Շենքի ենթակառուցվածքների հարմարեցումներ,
4. Նորմերին համապատասխան սանիտարահիգենիկ վիճակ,
5. Դասարաններում անհրաժեշտ լուսավորություն,
6. Սպորտային և այլ միջոցառումներ կազմակերպելու համար հարմարեցումներ:

Հաշվետվությունների ձևեր և ժամանակացույցեր

Խնդիր	Գործողություն	Կատարման Ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Թերի կատարման կամ չկատարման պատճառներ	Առաջարկու-թյուններ
Շենքային պայմանների բարելավում	Դպրոցի սանհանգույցների նորոգում	2023-2024 ուսումնական տարի	Նորոգվել են սանհանգույցները, փոխարինվել են ծորակները, զուգարանակոնքերը	-	-
Նյութատեխնիկական բազայի համալրում	4 նոր համակարգիչների ձեռքբերում	2023-2024 ուսումնական տարի	Ձեռք են բերվել 2 համակարգիչ	Անբավարար ֆինանսական միջոցներ	Նախատես հաջորդ ուսումնական տարում

Հաշվետվությունները կկազմվեն յուրաքանչյուր կիսամյակ, որի համար հիմք կհանդիսանան առանձին օղակների պատասխանատուների կողմից ներկայացված եռամսյակային հաշվետվությունները:

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կազմվելու է զարգացման ծրագրի կատարման գործողությունների պլան, որտեղ իրականացվող գործողությունների համար կսահմանվեն հստակ ժամկետներ, ինչպես նաև ընթացիկ իրավիճակից ելնելով կկատարվեն հաջորդ տարիների համար համապատասխան ճշգրտումներ, վերևում ներկայացված հաշվետվության ձևը կլրացվի ավելի մանրամասն գործողությունների բացվածքով և դրանց կատարողականով: Այստեղ որպես լրացման նմուշ-օրինակ օգտագործվել են հնգամյա ծրագրով նախատեսված ընդհանուր խնդիրներից և դրանցից բխող գործողություններից 1-2 օրինակ:

Վերահսկողության մեխանիզմներ

Զարգացման ծրագրով նախանշված այս նպատակի ապահովմանն ու խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների կատարման նկատմամբ վերահսկողություն կիրականացվի վերևում ներկայացված ձևաչափով բոլոր պատասխանատուների կողմից ներկայացված հաշվետվությունների, գնումների տարեկան պլանի և կատարողականի վերլուծությամբ, ամենօրյա շրջայցեր կատարելով, կատարվող աշխատանքները համակարգողի կողմից վերահսկելով:

ՆՊԱՏԱԿ 2

Դպրոցի համագործակցության շրջանակների ընդլայնում և սերտացում ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի, Սպիտակ համայնքի, Սարահարթ գյուղի վարչական ղեկավարի աշխատակազմի, ծնողական համայնքի, շահառու կազմակերպությունների հետ:

Խնդիրներ

1. Ակտիվացնել կապը ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի, Սպիտակ համայնքի, Սարահարթ գյուղի վարչական ղեկավարի աշխատակազմի հետ,
2. Ծնողական համայնքին մասնակից դարձնել սովորողների արտադասարանական և արտադպրոցական կրթության ապահովմանը,
3. Սովորողների կրթական կարիքների բավարարման նպատակով ձևավորել համագործակցություն այլ շահառու կազմակերպությունների հետ:

Գործողություններ

1. Մասնակցել կազմակերպվող մարզային միջոցառումներին, իսկ մարզային իշխանություններին մասնակից դարձնել դպրոցում կազմակերպվող միջոցառումներին,
2. Ակտիվ համագործակցել համայնքի հետ՝ կրթությունից դուրս մնացած երեխաներին հայտնաբերելու ուղղությամբ,
3. Մշակել սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին աջակցության ծրագրեր, և դրանք իրականացնել համայնքի, անհատ բարերարների կամ բարեգործական ընկերությունների օժանդակությամբ,
4. Աջակցել դասարանական և դպրոցական մակարդակներում ակտիվ և նախաձեռնող ծնողական խորհուրդների ձևավորմանը,
5. Ծնողական համայնքի հետ համատեղ կազմակերպել արտադպրոցական միջոցառումներ՝ էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր, այլ միջոցառումներ,
6. Նախաձեռնել երկարօրյա անվճար և վճարովի ուսուցման խմբերի ձևավորում՝ դրանց մասնակից դարձնելով նաև ծնողական համայնքին,
7. Ակտիվ համագործակցել կրթության ոլորտում ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ, այդ թվում՝ ԿՏԱԿ, ԿԶՆԱԿ, ՏՄԱԿ, ԳԹԿ և այլն:

Ռիսկեր

1. Մարզային իշխանությունների կողմից կրթության ոլորտին ոչ մեծ ուշադրության հատկացում,
2. Համայնքային նախաձեռնությունների պակաս, սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման համար ոչ բավարար ֆինանսական հատկացումներ,
3. Ծնողների պասիվություն, անտարբեր վերաբերմունք իրենց երեխաների կրթության նկատմամբ,
4. Վճարովի երկարօրյա խմբակների ձևավորման հարցում սովորողների ընտանիքների սոցիալական ծանր վիճակ,
5. Շահառու կազմակերպությունների հնարավորությունների ոչ արդյունավետ օգտագործում:

Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ

1. Դպրոցում կազմակերպվող միջոցառումներին նախապես հրավերների ուղարկում մարզային իշխանությունների ներկայացուցիչներին,
2. Փորձել գտնել նաև այլ աջակիցներ, բարեգործներ սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման համար,
3. Ծնողների հետ դասղեկների միջոցով, համադպրոցական ծնողական ժողովներով, ծնողական խորհրդի նիստերին մասնակցելով ներկայացնել առաջարկություններ, ծնողներին բացատրել նրանց մասնակցության դերն ու նշանակությունը երեխաների կրթության գործում,
4. Այլ թույլատրելի աղբյուրներից լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման ուղղությամբ գործողությունների իրականացում,
5. Դպրոցի կրթական կարիքների գնահատում, և դրանց բավարարման նպատակով այլ շահառու կազմակերպությունների հնարավորությունների վերլուծում, ընտրության կայացում:

Ժամանակացույց

Այս նպատակին հասնելուն ուղղված գործողությունները պետք է իրականացնել ողջ ուսումնական տարվա ընթացքում: Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում՝ սեպտեմբեր ամսին պետք ձևավորվեն դասարանական և դպրոցական ծնողական խորհուրդները, որին պետք է մասնակից դարձնել առավել թվով ծնողների: Տնօրենի

կրթական աջակցությունների գծով տեղակալի կողմից պետք է կազմվեն միջոցառումների տարեկան ժամանակացույցեր՝ ըստ դասարանների և դպրոցական մակարդակում, և իրականացվեն ըստ այդ ժամանակացույցերի:

Պատասխանատու

Տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ, դասղեկներ, ծնողական խորհրդի նախագահ:

Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ

Ներկայացված խնդիրների մի մասի համար ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, իսկ մյուս մասի լուծման համար կօգտագործվեն դպրոցին հատկացված ֆինանսական միջոցները, ծնողների, համայնքի կողմից տրամադրված աջակցությունները, իսկ հնարավորության դեպքում կօգտագործվեն նաև այլ աղբյուրներից ներգրավված միջոցներ:

Օգտագործվելու են դպրոցի անձնակազմի, սովորողների, ծնողների, համայնքային և մարզային իշխանությունների մարդկային ռեսուրսները և ներուժը:

Անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաներն են՝ համակարգչային տեխնիկա, աջակցության ծրագրեր, ուսուցանող պարագաններ, դիդակտիկ նյութեր և այլն:

Ակնկալվող արդյունքներ

1. Դպրոցի հանրային ընկալման և ճանաչելիության բարձրացում,
2. Սովորողների կրթության որակի և առաջադիմության բարելավում,
3. Համայնքի բոլոր երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկում,
4. Կրթական արդյունավետ տեխնոլոգիաների կիրառում,
5. Դպրոց-համայնք, դպրոց-ընտանիք կապի ամրապնդում:

Գնահատման չափանիշներ

1. Մարզային և համայնքային միջոցառումներին սովորողների մասնակցություն,
2. Մարզային և համայնքային իշխանությունների ներկայացուցիչների մասնակցություն դպրոցում կազմակերպված միջոցառումներին,
3. Կրթությունից դուրս մնացած երեխաների առկայություն,
4. Ծնողական նախաձեռնությունների, կրթության որակի բարելավմանն ուղղված առաջարկությունների առկայություն,
5. Ծնողական խորհուրդների նիստերի կանոնավոր գումարում,

6. Կազմակերպված էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր, միջոցառումներ,
7. Մշակված և իրականացված սոցիալական աջակցության ծրագրեր,
8. Ձևավորված երկարօրյա ուսուցման խմբակներ, խմբակներում բոլոր հնարավոր շահառուների ընդգրկում,
9. Կրթության ոլորտում ծառայություններ մատուցող ընկերությունների հետ համատեղ իրականացված ծրագրեր,

Հաշվետվությունների ձևեր և ժամանակացույցեր

Խնդիր	Գործողություն	Կատարման Ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Թերի կատարման կամ չկատարման պատճառներ	Առաջարկու-թյուններ
Ակտիվացնել կապը ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի, Սպիտակ համայնքի, Սարահարթ գյուղի վարչական ղեկավարի աշխատակազմի հետ	Ծնողական համայնքին մասնակից դարձնել սովորողների արտադասարանական և արտադպրոցական կրթության ապահովմանը	Ըստ միջոցառումների տարեկան պլանի	Սովորողները մասնակցել են մարզային և համայնքային 10 միջոցառումների, որոնցից՝ 4 սպորտային, 4 կրթական, 2 ժամանցային, դպրոցում անցկացված 15 միջոցառումներից մասնակցել են 5 միջոցառման	Անցկացված 4 միջոցառումներին հրավերներ չեն ուղարկվել	Սահմանել հսկողություն աշխատանքների պատշաճ իրականացման նկատմամբ
Ծնողական համայնքին մասնակից դարձնել սովորողների արտադասարանական և արտադպրոցական կրթության ապահովմանը	Ծնողական համայնքի հետ համատեղ կազմակերպել արտադպրոցական միջոցառումներ՝ էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր, այլ միջոցառումներ	Ըստ միջոցառումների տարեկան պլանի	Անցկացվել են նախատեսված միջոցառումներ 80 տոկոսը, այդ թվում՝ /թվարկել/	Մի քանի միջոցառումներ հետաձգվել կամ չեղարկվել են հետևյալ պատճառներով՝ /թվարկել/	Բացահայտել շեղումների սուբյեկտիվ պատճառները, բացառել դրանց կրկնությունը

Հաշվետվությունները կկազմվեն յուրաքանչյուր կիսամյակ, որի համար հիմք կհանդիսանան առանձին օղակների պատասխանատուների կողմից ներկայացված եռամսյակային հաշվետվությունները:

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կազմվելու է զարգացման ծրագրի կատարման գործողությունների պլան, որտեղ իրականացվող գործողությունների համար կսահմանվեն հստակ ժամկետներ, ինչպես նաև ընթացիկ

իրավիճակից ելնելով կկատարվեն հաջորդ տարիների համար համապատասխան ճշգրտումներ, վերևում ներկայացված հաշվետվության ձևը կլրացվի ավելի մանրամասն գործողությունների բացվածքով և դրանց կատարողականով: Այստեղ որպես լրացման նմուշ-օրինակ օգտագործվել են հնգամյա ծրագրով նախատեսված ընդհանուր խնդիրներից և դրանցից բխող գործողություններից 1-2 օրինակ:

Վերահսկողության մեխանիզմներ

Զարգացման ծրագրով նախանշված այս նպատակի ապահովմանն ու խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների կատարման նկատմամբ վերահսկողություն կիրականացվի վերևում ներկայացված ձևաչափով բոլոր պատասխանատուների կողմից ներկայացված հաշվետվությունների վերլուծությամբ, կազմակերպված միջոցառումներին, ժողովներին, հանդիպումներին անմիջական մասնակցությամբ:

ՆՊԱՏԱԿ 3

Ուսուցման ընթացքում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները նպատակային և արդյունավետ օգտագործելու ուղղությամբ ուսուցիչների կարողունակությունների ավելացում, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ուսուցման գործընթացի և դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացում:

Խնդիրներ

1. Անձնակազմի՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպում,
2. Ուսուցման գործընթացում ՏՀՏ գործիքակազմի կիրառման ավելացում,
3. Դպրոցի պաշտոնական կայքի վերագործարկում և տեղեկատվության հասանելիության մատչելի հարթակի ստեղծում,

Գործողություններ

1. Վարչատնտեսական մասի համակարգողին ներկայացնել առաջարկություն դասընթացներ կազմակերպող ընկերությունների հետ կնքելու համապատասխան պայմանագրեր,
2. Անձնակազմի և սովորողների մեդիագրագիտության վերլուծության իրականացում և կարիքների բացահայտում,
3. Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետի (նախկինում՝ օպերատոր) միջոցով համացանցում առկա անվճար աղբյուրներից ուսուցանող, առավել մատչելի վիդեոհոլովակների առանձնացում, բեռնում, դրանց միջոցով անձնակազմի ուսուցման կազմակերպում,
4. Էլեկտրոնային ուսումնական նյութերի ստեղծում ուսուցիչների կողմից և դրանց կիրառում ուսումնական գործընթացում,
5. Դպրոցի պաշտոնական կայքի ձևափոխում, առանձին բաժինների առանձնացում, կայքում պարտադիր հրապարակման ենթակա փաստաթղթերի և տեղեկատվությունների ցանկի հաստատում, դրանց հրապարակման ապահովում,
6. Ուսուցիչների կողմից էլեկտրոնային վարվող փաստաթղթերի ճշգրիտ և ժամկետներում լրացման նկատմամբ վերահսկողության իրականացում,

թերությունների բացահայտում և աջակցության ցուցաբերում՝ հետագայում սխալները բացառելու նպատակով,

Ռիսկեր

1. Ֆինանսական միջոցների սղություն, դասընթացների կազմակերպման ուղղությամբ ֆինանսական քիչ միջոցների հատկացում,
2. Տարիքով մեծ ուսուցիչների կողմից էլեկտրոնային գործիքների օգտագործման ձևերի դժվար յուրացում,
3. Ուսուցիչների կողմից նախաձեռնությունների պակաս,
4. Էլեկտրոնային փաստաթղթերում հաճախակի կրկնվող, անուշադրության հետևանքով սխալների առկայություն:

Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ

1. Ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում, լրացուցիչ միջոցների ներգրավման ուղղությունների բացահայտում, առցանց անվճար դասընթացներին պարտադիր բաժանորդագրություն,
2. Դպրոցում միմյանց փոխօգնության մթնոլորտի ձևավորում,
3. Նախաձեռնությունների խրախուսում, առավել ակտիվ ուսուցիչներին պարգևատրում,
4. Օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառում:

Ժամանակացույց

1. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում վերագործակել դպրոցի պաշտոնական կայքը,
2. Յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ անգամ հետևել էլեկտրոնային փաստաթղթերի վարման կանոնների պահպանմանը, դրանց հրապարակման ժամկետներին,
3. Յուրաքանչյուր ուսումնական տարի 2-3 անգամ կազմակերպել ուսուցանող դասընթացներ,
4. Ուսումնական տարվա ամբողջ ընթացքում վերահսկել գործողությունների կատարման ընթացքը:

Պատասխանատու

Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետ, մեթոդական միավորումների նախագահներ:

Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ

Ներկայացված խնդիրները պետք է լուծվեն դպրոցին հատկացված ֆինանսական միջոցներով, հնարավորության դեպքում կօգտագործվեն նաև այլ աղբյուրներից ներգրավված միջոցներ:

Օգտագործվելու են դպրոցի անձնակազմի, վերապատրաստող մասնագետների մարդկային ռեսուրսները և ներուժը:

Անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաներն են՝ համակարգչային տեխնիկա, ուսուցանող վիդեոհոլովակներ և այլ նյութեր:

Ակնկալվող արդյունքներ

1. Ուսուցիչների կողմից էլեկտրոնային գործիքների միջոցով առաջադրանքների ստեղծում և դրանց կիրառում ուսուցման գործընթացում,
2. Ուսուցիչների կողմից էլեկտրոնային կառավարման համակարգերի և դրանց հնարավորությունների իմացություն,
3. Դպրոցի կառավարման թափանցիկության ապահովում,
4. Կրթության որակի բարձրացում:

Գնահատման չափանիշներ

1. ՏՀՏ դասընթացների կազմակերպման կնքված պայմանագրերի առկայություն,
2. ՏՀՏ դասընթացների մասնկացած ուսուցիչներ,
3. Ուսուցիչների կողմից ՏՀՏ տարբեր գործիքներից օգտվելու կարողունակություն, այդ գործիքների օգտվելու մակարդակ,
4. Տարբեր միջավայրերում ուսումնական նյութերի, առաջադրանքների ստեղծման, տեղադրման, սովորողների ներգրավվման, դասերի անցկացման կարողունակություններ ունեցող ուսուցիչներ,
5. Էլեկտրոնային գրատախտակի հնարավորությունների իմացություն,
6. Ստեղծված ուսումնական նյութեր, առաջադրանքներ,

7. Պարզ, տեղեկատվության մատչելիություն ունեցող, մշտապես թարմացվող պաշտոնական կայքի առկայություն,
8. Առանց սխալների և թերությունների վարվող էլեկտրոնային փաստաթղթերի առկայություն,
9. Բարձր մեդիագրագիտություն ունեցող սովորողներ:

Հաշվետվությունների ձևեր և ժամանակացույցեր

Խնդիր	Գործողություն	Կատարման Ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Թերի կատարման կամ չկատարման պատճառներ	Առաջարկու-թյուններ
Ուսուցման գործընթացում ՏՀՏ գործիքակազմի կիրառման ավելացում	Էլեկտրոնային ուսումնական նյութերի ստեղծում ուսուցիչների կողմից և դրանց կիրառում ուսումնական գործընթացում	Յուրաքանչյուր կիսամյակ յուրաքանչյուր ուսուցչի կողմից առնվազն 3-4 անգամ	Ըստ դասարանների և առարկաների ներկայացնել յուրաքանչյուր ուսուցչի կատարած աշխատանքը	5 ուսուցիչ թերի է կատարել առաջադրանքը՝ պայմանավորված համակարգիչների քիչ թվով, 3 ուսուցիչ ընդհանրապես չեն ստեղծել էլեկտրոնային նյութեր	Համակարգողին ներկայացնել առաջարկ նոր համակարգիչներ ձեռք բերելու ուղղությամբ, աշխատանքը թերի կատարած ուսուցիչների համար կազմակերպել ուսուցանող դասընթաց
Անձնակազմի՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպում	Վարչատն-տեսական մասի համակարգողին ներկայացնել առաջարկություն դասընթացներ կազմակերպող ընկերությունների հետ կնքելու համապատասխան պայմանագրեր	Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար ունենալ գործող պայմանագրեր, իսկ դրանցից օգտվել ըստ տվյալ պահի կարիքներից	2024-2025 ուսումնական տարում կնքվել է 2 պայմանագիր, դասընթացների իրականացնող 2 կազմակերպու-թյուններում վերապատրաստվել են ընդհանուր 15 ուսուցիչներ	Ապահովել են նախատեսված արդյունքները	Առաջարկություն-ներ չկան

Հաշվետվությունները կկազմվեն յուրաքանչյուր կիսամյակ, որի համար հիմք կհանդիսանան առանձին օղակների պատասխանատուների կողմից ներկայացված եռամսյակային հաշվետվությունները:

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կազմվելու է զարգացման ծրագրի կատարման գործողությունների պլան, որտեղ իրականացվող գործողությունների համար կսահմանվեն հստակ ժամկետներ, ինչպես նաև ընթացիկ իրավիճակից ելնելով կկատարվեն հաջորդ տարիների համար համապատասխան

ճշգրտումներ, վերևում ներկայացված հաշվետվության ձևը կլրացվի ավելի մանրամասն գործողությունների բացվածքով և դրանց կարատողականով: Այստեղ որպես լրացման նմուշ-օրինակ օգտագործվել են հնգամյա ծրագրով նախատեսված ընդհանուր խնդիրներից և դրանցից բխող գործողություններից 1-2 օրինակ:

Վերահսկողության մեխանիզմներ

Զարգացման ծրագրով նախանշված այս նպատակի ապահովմանն ու խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների կատարման նկատմամբ վերահսկողություն կիրականացվի վերևում ներկայացված ձևաչափով բոլոր պատասխանատուների կողմից ներկայացված հաշվետվությունների վերլուծությամբ, դպրոցի պաշտոնական կայքի ամսական առնվազն 2 անգամ դիտարկմամբ, ուսուցիչների մոտ պարտադիր դասալսումների անցկացմամբ, տնօրենի և նրա ուսումնական աշխատանքների գծով տեղակալի կողմից էլեկտրոնային պարտադիր վարման ենթակա փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ ուսումնասիրությունների միջոցով հսկողության իրականացմամբ:

ՆՊԱՏԱԿ 4

Պետության կրթական քաղաքականության միտումներին և ընդունված չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության կազմակերպում, նախանշված վերջնարդյունքների ապահովում:

Խնդիրներ

1. Հանրակրթության նոր չափորոշչի ներդրման գործընթացի ապահովում,
2. Կրթության որակի բարձրացում, նոր չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովում:

Գործողություններ

1. Մանկավարժական համակազմի վերապատրաստումների իրականացում՝ հանրակրթության նոր չափորոշչի կիրառման թեմաներով, մեթոդական միավորումների կողմից աջակցության տրամադրում,
2. Հանրակրթության նոր չափորոշչի ներդման գործողությունների պլանի կազմում,
3. Առարկայական դրվածքների ուսումնասիրություն,
4. Սովորողների մնացորդային գիտելիքների ստուգում՝ գրավոր և բանավոր հարցումների միջոցով:

Ռիսկեր

1. Հանրակրթության նոր չափորոշչի ոչ լիարժեք ներդնում և ուսուցման կազմակերպում,
2. Մնացորդային ոչ բավարար գիտելիքների ապահովում,
3. Գնահատման նոր մեթոդների և գործիքակազմի դժվար ընկալում մանկավարժական համակազմի կողմից:

Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ

1. Տնօրենության, մեթոդական միավորումների հետևողական աշխատանք,
2. Դասալսումների իրականացում, դասապրոցեսում խնդիրների բացահայտում, քննարկում, սխալների ուղղում,
3. Փոխօգնության մթնոլորտի ձևավորում, առավել կարող ուսուցիչների կողմից մյուսներին աջակցում:

Ժամանակացույց

Գործընթացը սկսվում է 2023-2024 ուսումնական տարում և իրականացվում է ըստ լիազոր մարմնի կողմից սահմանված ժամանակացույցերի:

Պատասխանատու

Տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, մեթոդական միավորումների նախագահներ:

Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ

Ներկայացված խնդիրների լուծման համար կօգտագործվեն դպրոցին հատկացված ֆինանսական միջոցները:

Օգտագործվելու են դպրոցի անձնակազմի, սովորողների, դասընթացներ կազմակերպող ընկերությունների մարդկային ռեսուրսները և ներուժը:

Անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաներն են՝ նոր չափորոշիչներ, համակարգիչ, ծրագրեր, վիդեոհոլովակներ, ձեռնարկներ և այլն:

Ակնկալվող արդյունքներ

1. Ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացում,
2. Ժամանակակից պահանջներին համապատասխան կրթության ապահովում,
3. Կրթության որակի բարելավում:

Գնահատման չափանիշներ

1. Գերազանց, հարվածային սովորողների թիվ,
2. Չափորոշչով սահմանված կարողունակությունների ապահովում,
3. Բարձրագույն և միջին մասնագիտական հաստատություններ ընդունված սովորողների թիվ,
4. Ուսուցանման ընթացքում նոր մեթոդներ կիրառող ուսուցիչներ,
5. Վերապատրաստումներին մասնակցած ուսուցիչներ,
6. Իրականացված գրավոր և բանավոր հարցումներ:

Հաշվետվությունների ձևեր և ժամանակացույցեր

Խնդիր	Գործողություն	Կատարման Ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Թերի կատարման կամ չկատարման պատճառներ	Առաջարկու-թյուններ
Հանրակրթության նոր չափորոշչի ներդրման գործընթացի ապահովում	Մանկավարժական համակազմի վերապատրաստումների իրականացում	Ըստ գործողությունների պլանով նախատեսված ժամկետների	Իրականացվել են բոլոր պլանավորված դասընթացները	-	-

Հաշվետվությունները կկազմվեն յուրաքանչյուր կիսամյակ, որի համար հիմք կհանդիսանան առանձին օղակների պատասխանատուների կողմից ներկայացված եռամսյակային հաշվետվությունները:

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կազմվելու է զարգացման ծրագրի կատարման գործողությունների պլան, որտեղ իրականացվող գործողությունների համար կսահմանվեն հստակ ժամկետներ, ինչպես նաև ընթացիկ իրավիճակից ելնելով կկատարվեն հաջորդ տարիների համար համապատասխան ճշգրտումներ, վերևում ներկայացված հաշվետվության ձևը կլրացվի ավելի մանրամասն գործողությունների բացվածքով և դրանց կատարողականով: Այստեղ որպես լրացման նմուշ-օրինակ օգտագործվել են հնգամյա ծրագրով նախատեսված ընդհանուր խնդիրներից և դրանցից բխող գործողություններից օրինակ:

Վերահսկողության մեխանիզմներ

Զարգացման ծրագրով նախանշված այս նպատակի ապահովմանն ու խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների կատարման նկատմամբ վերահսկողություն կիրականացվի վերևում ներկայացված ձևաչափով բոլոր պատասխանատուների կողմից ներկայացված հաշվետվությունների վերլուծությամբ, ուսումնադաստիարակչական աշխատանքների և ներքին գնահատման հաշվետվությունների ամփոփմամբ, սովորողների մնացորդային գիտելիքների ստուգմամբ, արդյունքների վերլուծությամբ:

ՆՊԱՏԱԿ 5

Դպրոցում բոլոր շահառու խմբերի ներառմամբ առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորում և պահպանում, խորհրդակցական մարմինների դերի բարձրացում:

Խնդիրներ

1. Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային միջավայրի ստեղծում և պահպանում,
2. Հալածանքի, օտարման և բռնության դեպքերի կանխարգելում,
3. Խորհրդակցական մարմիններին (մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդներ) առավելագույնս ընդգրկում ուսումնական գործընթացում:

Գործողություններ

1. Դպրոցում բոլոր որոշումները կայացնել շահագրգիռ կողմերի հետ քննարկման, առաջարկությունների վերլուծության արդյունքում,
2. Յուրաքանչյուր ուսումնական տարի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանով նախատեսել հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման թեմաներով միջոցառումներ, ապահովել դրանց իրականացումը,
3. Հայտնաբերել հալածանքի, օտարման և բռնության դեպքերը և ձեռնարկել միջոցներ դրանց հետևանքների վերացման ուղղությամբ,
4. Կազմակերպել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառությունը՝ ապահովելով նրանց ինտեգրումը դպրոցական համընդհանուր միջավայրին և հասարակությանը,
5. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար մշակել առանձին ծրագրեր և ըստ անհրաժեշտության ներգրավել մասնագետներ,
6. Մասնակցել աշակերտական և ծնողական խորհուրդների առավելագույն թվով նիստերի, ցուցաբերել աջակցություն, հանդես գալ առաջարկություններով, լսել բոլոր առաջարկությունները, ընդունել որոշումներ, առաջարկությունները լսելի դարձնել այլ հարթակներում,

7. Ի պաշտոնե կազմակերպել մանկավարժական խորհրդի նիստերի պատշաճ իրականացումը, խրախուսել ուսուցիչների նախաձեռնությունները, ընդունել մասնակցային որոշումներ:

Ռիսկեր

1. Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման թեմաներով միջոցառումների ոչ այդքան կարևորում անձնակազմի կողմից և հետևողականության չցուցաբերում,
2. Հալածանքի, օտարման և բռնության դեպքերի չբարձրաձայնում անձնակազմի, սովորողների կողմից և ծածկադմփոցի իրականացում,
3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների նկատմամբ խտրական վերաբերմունք համադասարանցիների կողմից,
4. Շրջապատի կողմից վատ վերաբերմունք այլ կարծիք ունեցող և արտահայտող անձանց նկատմամբ,
5. Խորհրդակցական մարմինների կողմից նախաձեռնությունների պակաս, ուսման նկատմամբ անտարբերություն:

Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ

1. Անձամբ մասնակցել հալածանքի, օտարման և բռնության թեմաներով միջոցառումներին, հանդես գալ ելույթներով,
2. Սահմանել պատասխանատվության խիստ միջոցներ ծածկադմփոցի մասնակիցների նկատմամբ,
3. Դասղեկների, հոգեբանի, սոցիալական մանկավարժի, այլ մասնագետների ներգրավմամբ զրույցների, քննարկումների, բացատրական աշխատանքների կազմակերպում,
4. Բազմակարծության դեպքերի խրախուսում, այդպիսի դեպքերին հետևողական վերաբերմունքի ցուցաբերում,
5. Հաճախակի հանդիպումների կազմակերպում, արձանագրած հաջողությունների և թերությունների բարձրաձայնում, թերությունների վերացման ճանապարհային քարտեզների մշակում՝ աշխատանքներում ներառելով նաև խորհրդակցական մարմինների ներկայացուցիչներին:

Ժամանակացույց

Նշված գործողությունները պետք է իրականացվեն յուրաքանչյուր ուսումնական տարի: Բոլոր գործողությունները պետք է պլանավորվեն ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրում՝ համապատասխան ամիսների բացվածքով:

Պատասխանատու

Տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ, դասղեկներ, հոգեբան, մեթոդական միավորումների նախագահներ, խորհրդակցական մարմինների նախագահներ:

Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ

Ներկայացված խնդիրների լուծման համար հիմնականում ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, իսկ այդպիսիք առաջանալու դեպքում կօգտագործվեն դպրոցին հատկացված ֆինանսական միջոցները:

Օգտագործվելու են դպրոցի անձնակազմի, սովորողների, ծնողական համայնքի մարդկային ռեսուրսները և ներուժը:

Անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաներն են՝ համակարգիչ, պաստառներ, ծրագրեր, վիդեոհոլովակներ, դաստիարակչական բնույթի, բազմակարծությունը և հանդուրժողականությունը խրախուսող ուսուցանող նյութեր և այլն:

Ակնկալվող արդյունքներ

1. Դպրոցի մասնակցային կառավարում,
2. Դպրոցում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորում,
3. Կրթության ստացման հավասար իրավունքի ապահովում,
4. Խորհրդակցական մարմինների դերի բարձրացում:

Գնահատման չափանիշներ

1. Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման թեմաներով իրականացված միջոցառումներ,
2. Հալածանքի, օտարման և բռնության դեպքեր, դրանց հետևանքներ,
3. Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելված դեպքեր,
4. Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման թեմաներով իրականացված միջոցառումներին մասնակիցներ,

5. Հալածանքի, օտարման և բռնության դեպքերով կիրառված պատասխանատվության միջոցներ, իսկ կանխարգելման դեպքերով՝ կիրառված խրախուսման միջոցներ,
6. Կայացրած որոշումներին շահագրգիռ կողմերի մասնակցայնության աստիճան,
7. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ծրագրերի առկայություն,
8. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների շարժի՝ դպրոց ընդունվել, տեղափոխվել, վերլուծություն,
9. Շահագրգիռ կողմերի կողմից ներկայացված առաջարկություններ,
10. Ներկայացված առաջարկությունների կարգավիճակ՝ ընդունված, մերժված, քննարկման փուլում, ըստ խմբերի՝ սովորողներ, անձնակազմ, ծնողներ,
11. Խորհրդակցական մարմինների նիստերին տնօրենի մասնակցություն, թիվ և տոկոս:

<u>Հաշվետվությունների ձևեր և ժամանակացույցեր</u>

Խնդիր	Գործողություն	Կատարման Ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Թերի կատարման կամ չկատարման պատճառներ	Առաջարկու-թյուններ
Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային միջավայրի ստեղծում և պահպանում	Մասնակցել աշակերտական և ծնողական խորհուրդների առավելագույն թվով նիստերի	Ուսումնական տարվա ընթացքում	Մասնակցել եմ աշակերտական խորհրդի 2, ծնողական խորհրդի 3 նիստերի: Ներկայացվել են հետևյալ առաջարկությունները, որոնցից ընդունվել են, ընդունվել են մասամբ, չեն ընդունվել	Թվի նվազումը նախորդ տարվա համեմատ պայմանավոր-ված է աշխատանքային ծանրաբեռնվա-ծությամբ	-
Հալածանքի, օտարման և բռնության դեպքերի կանխարգելում	Յուրաքանչյուր ուսումնական տարի ուսումնադաս-տիարակչական աշխատանքների պլանով նախատեսել հալածանքի, օտարման և բռնության	Ըստ ուսումնա-դաստիարակ-չական աշխատանքների պլանի	Ըստ պլանի կատարվել են բոլոր միջոցառումները, որոնց մասնակցել են՝ 80 սովորող	-	-

	կանխարգելման թեմաներով միջոցառումներ, ապահովել դրանց իրականացումը				

Հաշվետվությունները կկազմվեն յուրաքանչյուր կիսամյակ, որի համար հիմք կհանդիսանան առանձին օղակների պատասխանատուների կողմից ներկայացված եռամսյակային հաշվետվությունները:

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կազմվելու է զարգացման ծրագրի կատարման գործողությունների պլան, որտեղ իրականացվող գործողությունների համար կսահմանվեն հստակ ժամկետներ, ինչպես նաև ընթացիկ իրավիճակից ելնելով կկատարվեն հաջորդ տարիների համար համապատասխան ճշգրտումներ, վերևում ներկայացված հաշվետվության ձևը կլրացվի ավելի մանրամասն գործողությունների բացվածքով և դրանց կատարողականով: Այստեղ որպես լրացման նմուշ-օրինակ օգտագործվել են հնգամյա ծրագրով նախատեսված ընդհանուր խնդիրներից և դրանցից բխող գործողություններից 1-2 օրինակ:

Վերահսկողության մեխանիզմներ

Զարգացման ծրագրով նախանշված այս նպատակի ապահովմանն ու խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների կատարման նկատմամբ վերահսկողություն կիրականացվի վերևում ներկայացված ձևաչափով բոլոր պատասխանատուների կողմից ներկայացված հաշվետվությունների վերլուծությամբ, ուսումնադաստիարակչական աշխատանքների և ներքին գնահատման հաշվետվությունների ամփոփմամբ, թերի կատարման կամ չկատարման պատճառների բացահայտմամբ, միջոցառումներին անձամբ մասնակցությամբ:

ՆՊԱՏԱԿ 6

Մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող մանկավարժական համակազմի ապահովմամբ կրթության որակի և առաջադիմության բարձրացում:

Խնդիրներ

1. Բարձր որակավորում ունեցող և նորարարական մոտեցումներ կիրառող մանկավարժական համակազմի ապահովում:

Գործողություններ

1. Մանկավարժական համակազմի համար պարբերաբար վերապատրաստումների կազմակերպում,
2. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների բարձրացման նպատակով ինքնակրթությամբ զբաղվելու համար նպաստավոր միջավայրի ձևավորում,
3. Կամավոր ատեստավորումներին մասնակցությանն աջակցության ցուցաբերում:
4. Կայուն բարձր արդյունքներ ապահոված անձնակազմի անդամներին մշտապես արժևորում և խրախուսում:

Ռիսկեր

1. Անձնակազմի մասնագիտական զարգացմանն ուղղված ոչ բավարար ֆինանսական միջոցների հատկացում,
2. Հետազոտական, վերլուծական, նախագծային աշխատանքներ կազմակերպելու համար ոչ բավարար նյութատեխնիկական միջոցների առկայություն,
3. Մանկավարժների, հատկապես միջին տարիքից բարձր, կամավոր ատեստավորմանը մասնակցությանը համարձակության պակաս,
4. Անձնակազմին խրախուսելու համար տարեկան բյուջեում ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ

1. Գտնել առավել մատչելի վերապատրաստման ծրագրեր, ապահովել առցանց անվճար դասընթացներին մանկավարժների մասնակցությունը, առցանց վճարովի դասընթացներին մասնակցել խմբերով,

2. Նախապես յուրաքանչյուր տարի մշակել նման աշխատանքների տարեկան պլան, գնահատել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների պահանջարկը, համակարգողի հետ միասին ձեռնարկել միջոցներ դրանց ապահովման ուղղությամբ,
3. Մանկավարժների հետ հաճախակի կազմակերպել քննարկումներ՝ շեշտադրելով ատեստավորումներին մասնակցելու կարևորությունը և անհրաժեշտությունը,
4. Փորձել գտնել հովանավորներ, իսկ դրա անհնարինության դեպքում կիրառել խրախուսման այլ մեթոդներ:

Ժամանակացույց

Նշված գործողությունները պետք է իրականացվեն յուրաքանչյուր ուսումնական տարի: Առաջին 3 խումբ գործողությունները պետք է պլանավորվեն ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրում՝ համապատասխան ամիսների բացվածքով, կամավոր ատեստավորումներին մանկավարժների մասնակցությունը կապահովվի ըստ ատեստավորումների ժամանակացույցի, իսկ անձնակազմի արժևորում և խրախուսում՝ տարեկան և կիսամյակային արդյունքներով:

Պատասխանատու

Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, մեթոդական միավորումների նախագահներ

Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ

Ներկայացված խնդիրների լուծման համար կօգտագործվեն դպրոցին հատկացված ֆինանսական միջոցները, հովանավորների կողմից տրամադրված աջակցությունները, իսկ հնարավորության դեպքում կօգտագործվեն նաև այլ աղբյուրներից ներգրավված միջոցներ:

Օգտագործվելու են դպրոցի անձնակազմի, սովորողների, մարդկային ռեսուրսները և ներուժը:

Անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաներն են՝ համակարգչային տեխնիկա, լաբորատոր նյութեր և սարքեր, վերապատրաստումների ծրագրեր, հարցաշարեր և այլն:

Ակնկալվող արդյունքներ

1. Վերապատրաստված ուսուցիչների առկայություն դպրոցում,
2. Կամավոր ատեստավորման շեմը հաղթահարած ուսուցիչների առկայություն դպրոցում,
3. Սովորողների կրթության որակի և առաջադիմության աճ,
4. Գնահատված և արժևորված թիմի ստեղծում:

Գնահատման չափանիշներ

1. Վերապատրաստված ուսուցիչներ, թիվը և տոկոսը, դինամիկան նախորդ տարիների համեմատ,
2. Կամավոր ատեստավորման շեմը հաղթահարած ուսուցիչներ, թիվը և տոկոսը, դինամիկան նախորդ տարիների համեմատ,
3. Դպրոցում գերազանցիկների և հարվածայիններ, թիվը և տոկոսը, դինամիկան նախորդ տարիների համեմատ,
4. Իրականացված հետազոտական աշխատանքներ, թիվը և տոկոսը, դինամիկան նախորդ տարիների համեմատ,
5. Վերապատրաստումների արդյունքում ուսուցման նոր մեթոդներ կիրառող ուսուցիչներ, թիվը և տոկոսը, դինամիկան նախորդ տարիների համեմատ,
6. Վերապատրաստումներին հատկացված միջոցների և կրթության որակի փոփոխության միջև կապի վերլուծում,
7. Անձնակազմի խրախուսված և արժևորված անդամներ, թիվը և տոկոսը, դինամիկան նախորդ տարիների համեմատ,
8. Անձնակազմի արժևորման և խրախուսման կարգի առկայություն և գործածություն,
9. Անձնակազմի արժևորման և խրախուսման կարգում խրախուսման ձևերի և դեպքերի հստակ նկարագրություն,
10. Խրախուսման ներկայացված, բայց մերժված առաջարկություններ, թիվը և տոկոսը, դինամիկան նախորդ տարիների համեմատ:

Հաշվետվությունների ձևեր և ժամանակացույցեր

Խնդիր	Գործողություն	Կատարման Ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Թերի կատարման կամ չկատարման պատճառներ	Առաջարկու-թյուններ
Բարձր որակավորում ունեցող և նորարարական մոտեցումներ կիրառող մանկավարժական համակազմի ապահովում	Մանկավարժական համակազմի համար պարբերաբար վերապատրաս-տումների կազմակերպում	Ըստ ուսումնադաս-տիարակչական աշխատանքների պլանով հաստատված ժամանակացույցի	Վերապատրաս-տումներն իրականացվել են հետևյալ ուղղություններով՝ /թվարկել/, մասնակցել են հետևյալ ուսուցիչները՝ /թվարկել/	Իրականացվել են պլանով նախատեսված նոլոր վերապատրաս-տումները	-

Հաշվետվությունները կկազմվեն յուրաքանչյուր կիսամյակ, որի համար հիմք կհանդիսանան առանձին օղակների պատասխանատուների կողմից ներկայացված եռամսյակային հաշվետվությունները:

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կազմվելու է զարգացման ծրագրի կատարման գործողությունների պլան, որտեղ իրականացվող գործողությունների համար կսահմանվեն հստակ ժամկետներ, ինչպես նաև ընթացիկ իրավիճակից ելնելով կկատարվեն հաջորդ տարիների համար համապատասխան ճշգրտումներ, վերևում ներկայացված հաշվետվության ձևը կլրացվի ավելի մանրամասն գործողությունների բացվածքով և դրանց կատարողականով: Այստեղ որպես լրացման նմուշ-օրինակ օգտագործվել են հնգամյա ծրագրով նախատեսված ընդհանուր խնդիրներից և դրանցից բխող գործողություններից օրինակ:

Վերահսկողության մեխանիզմներ

Զարգացման ծրագրով նախանշված այս նպատակի ապահովմանն ու խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների կատարման նկատմամբ վերահսկողություն կիրականացվի վերևում ներկայացված ձևաչափով բոլոր պատասխանատուների կողմից ներկայացված հաշվետվությունների վերլուծությամբ, ուսումնադաստիարակչական աշխատանքների և ներքին գնահատման հաշվետվությունների ամփոփմամբ, թերությունների բացահայտմամբ, դրանց կանխարգելման շուրջ քննարկումների կազմակերպմամբ: